

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՄԶԱԶԻՄԱՆ ԷԿՈ»

ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

---

ՀՀ ԼՈՌԻՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏԻ ՏՈՐՏԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ  
1-ԻՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2024-2025ԹԹ. ԿԱՏԱՐՎԵԼԻՔ  
ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

Տնօրեն՝

Ա. Մինասյան

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	3
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	6
Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	6
Նախատեսվող գործունեության բնութագիրը	18
Նախագծման նորմատիվ-իրավական հենքը	23
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	28
Ռեյիեֆ, երկրաձևաբանություն, սողանքներ, սեյսմիկ բնութագիր	28
Շրջանի կլիման	29
Մթնոլորտային օդ	35
Ջրային ռեսուրսներ	38
Հողեր	42
Բուսական և կենդանական աշխարհ	43
Անտառային ռեսուրսներ	46
Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ	49
3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	55
Ենթակառուցվածքներ	55
Հողերի տնտեսական յուրացման բնութագիր	61
Պատմության, մշակութային հուշարձաններ	62
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	64
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	71
6. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ	78
8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ) ՊԼԱՆ	80
Օգտագործված գրականության ցանկ	82
Հավելված 1. Անշարժ գույքի վկայականների պատճենները	83

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

**Ընդերք՝** հողածածկույթից ներքև, իսկ դրա բացակայության դեպքում՝ երկրի մակերևույթից, ջրավազանների կամ ջրհոսքերի հատակից ներքև՝ ըստ խորության տեղադրված երկրակեղևի մաս, որը մատչելի է ընդերքօգտագործման համար.

**Ընդերքօգտագործում՝** երկրաբանական ուսումնասիրությունների, օգտակար հանածոների արդյունահանման նպատակներով ընդերքի օգտագործում կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակում.

**Օգտակար հանածոյի երևակում՝** ընդերքի տեղամաս, որում հայտնաբերվել է օգտակար հանածոյի առկայություն, որի քանակը, որակը և արդյունաբերական նշանակությունը դեռ որոշված չեն

**Երկրաբանական ուսումնասիրություններ՝** ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտաձին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանածոների պաշարները

**Ընդերքի տեղամաս՝** որոշակի աշխարհագրական սահմանանշում պարունակող ընդերքի մաս, որում պետք է իրականացվեն ընդերքօգտագործման աշխատանքներ.

**Օգտակար հանածո՝** ընդերքում պարփակված պինդ հանքային գոյացումներ, հեղուկ կամ գազային բաղադրամասեր, այդ թվում՝ ստորերկրյա ջրեր (քաղցրահամ և հանքային) և երկրաջերմային էներգիա, ջրավազանների, ջրհոսքերի հատակային նստվածքներ, որոնց քիմիական կազմը և ֆիզիկական հատկանիշները թույլ են տալիս դրանք օգտագործել ուղղակիորեն կամ վերամշակումից հետո.

**Օգտակար հանածոյի պաշարներ՝** օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են.

**Հանքավայր՝** ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

**Ընդերքօգտագործման իրավունք՝** համապատասխան ընդերքօգտագործման համաձայնությունով կամ թույլտվությունով, ծրագրով կամ նախագծով, ընդերքօգտագործման պայմանագրով, լեռնահատկացման ակտով հավաստվող՝

ընդերքի որոշակի տեղամասի երկրաբանական ուսումնասիրության կամ օգտակար հանածոների արդյունահանման բացառիկ իրավունքներ.

**Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական**՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում

**Բնապահպանական կառավարման պլան**՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում

**Բույսերի Կարմիր գիրք**՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

**Կենդանիների Կարմիր գիրք**՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող կենդանիների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

**Հող**՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

**Հողի բերրի շերտ**՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով

**Խախտված հողեր**՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր



**Ռեկուլտիվացում**՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական

**Ազդակիր համայնք**՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

**Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով մշտադիտարկումներ**՝ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային ծրագրերին զուգընթաց՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով, օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային նախագծով, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով և ազդեցության գնահատման հաշվետվությամբ ամրագրված ցուցանիշների հիման վրա իրականացվող մշտադիտարկումներ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը**


ՀՀ Լոռու մարզի Մարգահովիտի տորֆի հանքավայրի 1-ին տեղամասի տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները նախաձեռնողն է «Համգաչիման Էկո» ՍՊ ընկերությունը: ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում ընկերության գրանցման համարն է 62.110.1172951, գրանցման ամսաթիվը՝ 14.04.2021թ., գրանցման հասցեն՝ Հայաստան, Լոռի, գ. Մարգահովիտ, 18-3փ. տ. 8: Աշխատանքների համար ընտրված տարածքը վարչական տեսակետից ներառված է Փամբակ խոշորացված համայնքի Մարգահովիտ գյուղական բնակավայրի սահմաններում (նկար 1-3): Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը համայնքային կադաստրային քարտեզներում հաշվառված է որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության հող, գործառնական նշանակությունը՝ խոտհարկ:

Հայցվող տարածքի կոորդինատները ըստ ArmWGS-84 համակարգի ներկայացված են ստորև և նկար 4-ում:


Կետի համարը	Կոորդինատները	
	X	Y
1.	4511999.7620	8469764.6737
2.	4512043.6792	8469820.5658
3.	4512061.8953	8469861.3742
4.	4512079.6482	8469907.4366
5.	4512003.9860	8469941.0996
6.	4511992.6325	8469945.4280
7.	4511969.2220	8469955.9392
8.	4511963.5675	8469958.9296

Կետի համարը	Կոորդինատները	
	X	Y
9.	4511881.9641	8469931.9235
10.	4511887.9556	8469922.6777
11.	4511904.6102	8469900.5188
12.	4511934.0485	8469858.8613
13.	4511949.6337	8469829.4614
14.	4511981.8884	8469788.5470
1.	4511999.7620	8469764.6737

Մարգահովիտ գյուղի բնակելի հատվածից հայցվող տարածքը գտնվում է նավագագույնը 2.17կմ հեռավորության վրա: Մոտ 2.2կմ հեռավորության վրա են գտնվում բնակավայրի արտադրական շինություններով զբաղեցրած տարածքները, 1.3կմ հեռավորության վրա՝ Հ-8 միջպետական նշանակության, 1.29կմ հեռավորության վրա՝ S-5-10 տեղական նշանակության և 3.14կմ հեռավորության վրա՝ Հ-27 հանրապետական նշանակության ավտոճանապարհները:



Նկար 1.




Նկար 2.



# ԵՐԵՎԱԿԱՄԱՆ ՇՐՋԱՆԻ ՍՈՒԵՄԱՏԻԿ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

Արտատպված է 1:10 000 մասշտաբի  
K-38-114-3-4-1 անվանակարգային թերթից





Նկար 3.

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Մեխանական  
 Լոռու մարզ Փամբակ համայնք  
 Լոռու մարզ Փամբակ համայնք  
 Լոռու մարզ Փամբակ համայնք

Լոռու մարզ Փամբակ համայնք գյուղ Սարգսիսիս  
 Կառուցման համայնք, հատված  
 Հողատիրական դրոշմ




Հաստատում են  
 Փամբակ Համայնքի ղեկավար  
 Ս.Նովոսեանյան  
 ամուսնացված, 2 երեխա

Սակերես հա 1.986548  
 Ծածկագիր 06-070-0318-0009  
 Սպաստակային նշանակություն  
 Գործառնական նշանակություն  
 Լրացուցիչ նշումներ

Զբոսաշրջային կետեր	Հողամասի կոորդինատներ		Գծային չափեր (ն)
	X	Y	
1	8469764,6737	4511999,7620	71,08
2	8469820,5658	4512043,6792	44,69
3	8469861,3742	4512061,8953	49,37
4	8469907,4366	4512079,6482	82,81
5	8469941,0996	4512003,9860	12,15
6	8469945,4280	4511992,6325	25,66
7	8469955,9392	4511969,2220	


Մասշտաբ 1:500  
 Բրակավորում ունեցող անձ  
 Բրակավորման վկայականի համարը  
 Ստորագրություն  
 Իրավաբանական անձի անվանումը  
 ՀՎԳԳ  
 Ստորագրություն  
 ամիս  
 հատակագծի կազմման  
 11.03.2022 թ  
 14.03.2022 թ





Երջարանում (տնկան) կետեր	Հողանասի		Գծային չափերը (ծ)
	Կոորդինատներ		
	X	Y	
7	8469955,9392	4511969,2220	6,40
8	8469958,9296	4511963,5675	85,96
9	8469931,9235	4511881,9641	11,02
10	8469922,6777	4511887,9556	27,72
11	8469900,5188	4511904,6102	51,01
12	8469858,8613	4511934,0485	33,28
13	8469829,4614	4511949,6337	52,10
14	8469788,5470	4511981,8884	29,82
1	8469764,6737	4511999,7620	

Սաւաշտար 1:500

Որակավորում ունեցող անձ	ՏՊԲԿԱԿ ԿԵՆՏՐՈՆ
Որակավորման վկայականի համարը	ՏՊԲԿԱԿ 489 ԱՇԽԿԵԱՐ
Ստորագրություն	
Իրավաբանական անձի անվանումը	ՀԱՅԿ ՀԱՆՐԱՅԻՆ ԵՐԿՐԱՆԱԿԱՆ ԿՈՄՊԱՆԻԱ
ՀԿԳԳ	0869884041
Ստորագրություն	
ամիս	Հարագրության
անձաթիվ	հատվածի
	կազմման
	11.03.2022 թ
	14.03.2022 թ



Նկար 4.

Մարգահովիտի տորֆի հանքավայրի 1-ին տեղամասի տարածքը գտնվում է ՀՀ Լոռու մարզի մարզկենտրոն Վանաձոր քաղաքից մոտ 11կմ հեռավորության վրա:

ՀՀ Լոռու մարզը տարածքի մեծությամբ երրորդն է հանրապետությունում (զբաղեցնում է ՀՀ տարածքի 12.7 %-ը), տարածքը՝ 3799 քառ. կմ, ամենամեծը հանրապետության հյուսիսային մարզերից: Այն հանդիսանում է հանրապետության հյուսիսային դարպասը, սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը (110կմ երկարությամբ), արեւելքից՝ Տավուշի, արեւմուտքից՝ Շիրակի, հարավից՝ Կոտայքի եւ Արագածոտնի մարզերին: Մարզն ընդգրկում է նախկին Գուգարքի, Ստեփանավանի, Սյիտակի, Թումանյանի, Տաշիրի տարածաշրջանները:

Լոռու մարզն ընդգրկում է Դեբեդ գետի ավազանը ամբողջությամբ, տարածքի մոտ 80% զբաղեցնում են լեռնաշղթաները եւ խոշոր լեռները: Մարզի տարածքում են ձգվում Ջավախքի, Բազումի, Փամբակի, Գուգարաց, Վիրահայոց, Հալաբի լեռնաշղթաները:

Առանձնանում են Փամբակի, Լոռվա գոգավորությունները եւ Լոռվա ձորը:

Ագրոկլիմայական տեսակետից ընկած է ինտենսիվ ոռոգման գոտում: Հարուստ է հանքային աղբյուրներով:

Բնակավայրերը գտնվում են ծովի մակերևույթից 520-ից 1800մ բարձրության վրա: Մարզն աչքի է ընկնում համեմատաբար խոնավ կլիմայով: Միջին և բարձրադիր գոտում կլիման բարեխառն լեռնային է, տեւական, ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Օդի միջին ջերմաստիճանը տատանվում է ձմռանը  $-4.8^{\circ}\text{C}$ -ից մինչեւ  $+18^{\circ}\text{C}$  ամռանը: Նախալեռնային գոտում կլիման մերձարեւադարձային է, չափավոր շոգ եւ չորային ամառներով, մեղմ ձմեռներով:

Մարզի տարածքում տիրապետում են անտառային, լեռնատափաստանային, մերձալպյան մարգագետինները: Անտառային ֆոնդը կազմում է մարզի տարածքի մոտ 27%-ը, հանրապետության անտառային ծածկույթի 30%: Հիմնական ծառատեսակներն են՝ հաճարենին, կաղնին, բոխին և սոճին, իսկ ոչ հիմնական տեսակները՝ լորենին, կեչին, թեղին, հացենին: Անտառածածկ տարածքները ընդգրկում են Թումանյանի, Ստեփանավանի և Գուգարքի տարածաշրջանները:

Լոռու մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 251հազ.հա:


Մարզը հարուստ է տարբեր տեսակի օգտակար հանածոներով և իր նշանակությամբ երկրորդն է Հայաստանի Հանրապետությունում:

Աղստև գետի հովտում, Մարգահովիտ, Լերմոնտովո և Ֆիոլետովո բնակավայրերի տարածքում հայտնի տորֆային առաջացումները երկրորդ տարիներ օգտագործվել են Վանաձորի «Արմենիա» սանատոր համալիրում որպես բուժիչ ցեխի պաշարներ: Ընդհանուր առմամբ Գուգարքի տարածաշրջանում քարտեզագրված են 11 տորֆային երևակումներ, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 35հա:

Տորֆային երևակումների տարածքում որոնողական-գնահատողական և հետախուզական աշխատանքներ են կատարվել 1973թ.-ին Վ.Զուրակովի և 1979թ.-ին Է.Տոնոյանի կողմից:

2012 թվականին «Նեկառ» ՍՊ ընկերության պատվերով կատարվել է Մարգահովիտի տորֆերի հանքավայրի հետախուզում, ինչի արդյունքում ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ՕՀՊԳ 28.09.2012թ.-ի №338 որոշմամբ հաստատվել են 37.6հազ.տ տորֆի պաշարներ (պիտանի են գյուղատնտեսության ոլորտում որպես պարարտանյութ):

«Համգաչիման Էկո» ՍՊ ընկերության կողմից հայցվող տարածքը գտնվում է Մարգահովիտի հանքավայրի 1-Յ բլոկից մոտ 95-110մ արևելք-հյուսիս-արևելք (նկար 5):



Նկար 5.

Մարգահովիտի տորֆի հանքավայրի և Մարգահովիտի տորֆի հանքավայրի 1-ին տեղամասի հայցվող տարածքի տեղադիրքը



Մարգահովիտի տորֆի հանքավայրի 1-ին տեղամասը գտնվում է Աղստևի անտիկլինալային ծալքի սահմաններում, որի միջուկը բաղկացած է սենոնի կրաքարերից և միջին էոցենի հրաբխանստվածքային ապարներից (նկար 6): Շրջանի երկրաբանական կառուցվածքի համառոտ նկարագիրը տրվում է ըստ Հայաստանի հյուսիս-արևելյան մասում, այդ թվում նաև K-38-114-B անվանակարգային թերթի սահմաններում, 1957-60թթ.-ին կատարված որոնողա-հանութային աշխատանքների տվյալների (Գ.Հակոբյան, Ջ.Հովհաննիսյան):


Տեղամասի շրջանի շերտագրությունը (ներքևից վերև) ներկայացված է հետևյալ կերպ.

Վերին կավիճ (սենոն): Շրջանի ամենահին ապարները ներկայացված են սենոնի կրաքարերով, որոնք կազմում են ընդլայնական ուղղությամբ ձգվող Աղստևի անտիկլինալային ծալքի միջուկը: Կրաքարերը մերկանում են Ֆիոլետովո գյուղի արևելյան ծայրամասային հատվածում, Աղստև գետի կիրճի երկու կողմերում, գետի աջ վտակների վերին հոսանքներում: Կրաքարերի տեսանելի հորությունը հասնում է 350մ-ի:


Տարածաշրջանում կատարված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ անցած հետախուզական հորատանցքերով հատվել է սենոնի կրաքարերը ծածկող և միջին էոցենի հաստվածքը հիմնատակող ավելի քան 70մ հզորությամբ բազալային կոնգլոմերատների շերտը:

Միջին էոցենի հասակի ապարները ունեն լայն տարածքում նկարագրվող շրջանում, ներկայացված են տարբեր կազմի հրաբխանստվածքային ապարներով, դրանց պիրոկլաստներով և պատվում են Գիլուտի, Ֆիոլետովոյի, Թեժսարի և Գոլովինոյի զանգվածների ինտրուզիվ ապարներով:

Միջին էոցենի ապարները ներկայացված են երկու շերտախմբով՝ շիրակի շերտախումբ, որը կազմված է տուֆաավազաքարերով, տուֆիտներով, քվարցային պորֆիրիտներով (տարածված է ներկայացվող քարտեզի սահմաններում) և բազումի շերտախումբ, որը ներկայացված է անդեզիտային պորֆիրիտներով, դրանց տուֆափշրաքարերով, տուֆակոնգլոմերատներով, տուֆաավազաքարերով և ավազներով:



**Երկրաբանական կտրվածք Ա-Բ գծով**



### Պ Ա Յ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ն Շ Ա Ն Ն Ե Ր

- Չորրորդական ժամանակաշրջան: Ալյուվիալ-դելյուվիալ առաջացումներ:
- Չորրորդական ժամանակաշրջան: Տորֆային առաջացումներ:
- Միջին եղեն: Պորֆիրիտներ, տուֆափշրաքարեր:
- Վերին կավիճ: Կրաքարեր (կտրվածքի վրա):

**Բնտրուղիվ առաջացումներ**

- Պորֆիրանման գրանոդիորիտներ:
- Խոշորահատիկ գրանոդիորիտներ:
- Սիենիտ-գրանիտներ, գրանոսիենիտներ և պորֆիրանման սիենիտներ:
- Ավալային նեֆելինային սիենիտներ:
- Հիբրիդային ապարներ (վերաբյուրեղացված, հպակային վերափոխված առաջացումներ):

**Երակային ապարներ**

- Ապլիտներ
- Տեկտոնական խախտումներ
- Տեղադրման տարրեր

**Նկար 6.**

Հրաբխանստվածքային հաստվաքի կազմում առանձնացվել են պլազիոկլազային, դիաբազային, անդեզիտային պորֆիրիտներ, դրանց փշրաքարեր ու տուֆափշրաքարեր, քվարցային պորֆիրիտներ:

Հաստվածքի հզորությունը հանսանում է մինչև 1300մ:

Չորրորդական ժամանակաշրջանին են վերագրվում լայն տարածում ունեցող գետահովիտների և լեռնալանջերի հետ կապված, ինչպես նաև լճային ծագման ալյուվիալ-դելյուվիալ առաջացումները և տորֆակուտակները:

Ըստ հետախուզական հորատանցքերի տվյալների՝ մինչև 150մ հզորությամբ չորրորդական առաջացումների կտրվածքը սկսվում է լճային նստվածքներով, որոնք ներկայացված են կավերով, կավավազներով, ավազաքարերով, մանրազլաքարային կոնգլոմերոտներով և ավարտվում է տարակազմ ալյուվիալ-դելյուվիալ նստվածքներով (խոշորահատիկ ավազաքարեր, մեծոբեկորային-զլաքարային առաջացումներ):

Տորֆերն ունեն խոտային ծագում, ցածրադաշտային տիպի են, կնյունային:

Ինտրուզիվ ապարների ներդրումը կապված է Աղստևի անտիկլինալի և Աղստև-Գարպիի խորքային բեկվածքի ձևավորման հետ, ինչը կատարվել է պալեոգենյան տեկտոնական փուլում:

Ներկայացված քարտեզի սահմաններում ինտրուզիվ ապարներից մերկանում են քվարցային դիորիտներ և գրանոդիորիտներ, պորֆիրանման գրանոդիորիտներ և ալկալային նեֆելինային սիենիտներ:

Ինտրուզիվ զանգվածների ներդրման արդյունքում միջին եոցենի հրաբխանստվածքային հաստվածքում ձևավորվել են հպակային-վերափոխված ապարների գոտիներ:

Տեկտոնական շրջանացման տեսակետից Մարգահովիտի հանքավայրի 1-ն տեղամասի տարածքը ներառված է Սևանի մեզասինկլինալային գոտում, Աղստևի անտիկլինալային ծալքի սահմաններում: Ծալքի առանցքային մասով անցնում է Աղստև-Գարպիի (Մայմեխ-Մեղրուտի) վարնետքային բնույթի խախտումը:

Նախնական դիտարկման արդյունքներով և ֆոնդային նյութերի ուսումնասիրության տվյալներով, Մարգահովիտի տորֆի հանքավայրի 1-ին

տեղամասի կապված է չորրորդական ժամանակաշրջանի ոչ մեծ լճակի տարածքում ձևավորված առաջացումների հետ (նկար 7):

Լճակները ձևավորվել էին հրաբխածին ծագման ապարների թասանման իջվածքներում, որտեղ լճային ջրերի նահանջից հետո պահպանվել է խոնավ, մասամբ ճահճային միջավայր՝ առատ ճահճային բուսականությամբ:

Լճակները հիմնատակող հոծ, զանգվածեղ հրաբխային ապարների ցածր ջրաթափանցելիության, առատ մթնոլորտային տեղումների և աննշան գոլորշիացման արդյունքում ձևավորվել է բուսական մնացորդների կուտակման, քայքայման և փտման համար նպաստավոր պայմաններ:

Մարգահովիտի իջվածքի սահմաններում լայն տարածված են նաև մակերևութային ջրային հոսքեր (Աղստև գետի ավազան) և գրունտային ջրերի հորիզոններ, որոնք նույնպես նպաստում են ճահճային միջավայրի ձևավորմանը և տորֆառաջացմանը:


Գուգարքի տարածաշրջանի տորֆային առաջացումները կապված են Աղստև գետի վերինախին առաջին դարավանդի տարածքների հետ:

Տորֆերն ունեն խոտային ծագում, ցածրադաշտային տիպի են, կնյունային:

Ընդհանուր առմամբ, 1973 և 1979թթ.-ին կատարված որոնողական, որոնողագնահատողական աշխատանքներով Գուգարքի տարածաշրջանում քարտեզագրվել են 11 տորֆային կուտակներ, որոնք 15-50% սահմաններում տատանվող մոխրայնությամբ և 20-50% սահմաններում տատանվող քայքայման աստիճանը բնութագրող ցուղանիշով: Տորֆային կուտակների ընդհանրական երկրաբանական կտրվածքը ներկայացված է հետևյալ կերպ.


- մուգ դարչնագույն տորֆեր, մոտ 3.0մ հզորությամբ, որից մոտ 0.5մ վերին քուլքային շերտի առաջացումներ,
- մոխրագույն մածուծիկ հատակային կավեր, մոտ 0.5մ հզորությամբ,
- մոխրագույն, կանաչավուն-մոխրագույն հրաբխային ծագման ապարներ:

ՀՀ Լոռու մարզի Մարգահովիտի տորֆերի հանքավայրի  
1-ին տեղամաս  
Սխեմատիկ երկրաբանական քարտեզ  
Մասշտաբ 1:1000










Երկրաբանական կտրվածք Ա-Բ գծով

Մասշտաբ հորիզ. 1:1000  
ուղղ. 1:100



Պ Ա Յ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ն Շ Ա Ն Ն Ե Ր

-  Չորրորդական ժամանակաշրջան: Այլուվիալ-դելյուվիալ առաջացումներ:
-  Չորրորդական ժամանակաշրջան: Տորֆային առաջացումներ:
-  Միջին էոցեն: Պորֆիրիտներ, սուլֆաիջրաքարեր:  
Ինտրուզիվ առաջացումներ
-  Պորֆիրանման գրանոդիորիտներ:
-  Ապարների երկրաբանական սահմաններ:
-  Չ/հ-5 Հետախուզական հորը և դրա հերթական համարը:
-  Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը:

Նկար 7.

▪ **Նախատեսվող գործունեության բնութագիրը**

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող Մարգահովիտի տորֆերի հանքավայրի 1-ին տեղամասի տարածքում կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների ծրագիրը կազմված է ըստ «Инструкция по составлению проектов и смет на геологоразведочные работы», «Инструкция по разведке торфяных месторождений» և «Методическое руководство по разведке торфяных месторождений» հրահանգների և մեթոդական ցուցումների:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի օգոստոսի 11-ի N06-Ն հրամանով տոնֆի հանքավայրերի հետախուզման հրահանգ չի հաստատվել:

Երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել երկրաբանահանույթային, մակերևութային հետախուզական փորվածքների անցման, փաստագրման և նմուշարկման աշխատանքների համալիրով:

Ընդ որում հաշվի առնելով տեղամասի պարզ երկրաբանական կառուցվածքը, օգտակար հանածոյի մարմնի մորֆոլոգիական ձևը և չափերը, հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել մինչև 3.7մ խորությամբ թվով 17 հետախուզահորերի միջոցով: Հետախուզահորերի կտրվածքը ընդունվում է 1.5մx1.0մ:

Տեղամասի հետախուզումը նախատեսվում է կատարել միմյանցից 50մ հեռավորությամբ հետախուզական պրոֆիլներով, որոնց վրա հետախուզական հորերի հեռավորությունը կազմում է 40-70մ:

Ընտրված հետախուզացանցը թույլ կտա օգտակար հանածոյի հետախուզված պաշարները հաշվարկել արդյունաբերական B կարգով: Արդյունաբերական B կարգի պաշարները պետք է բավարարեն հետևյալ պահանջներին.

- ուսումնասիրված են տորֆային կուտակի չափերը, կուտակի ձևաբանական առանձնահատկությունները, ներքին կառուցվածքը և տեղադրման պայմանները, ոչ կոնդիցիոն հատվածները,

- որոշված և եզրագծված են տորֆի բնական տարատեսակները, տիպերը (իսկ դրա անհնարինության դեպքում՝ բացահայտված են դրանց տարածական բաշխման

օրինաչափությունները և տորֆային հումքի կարգերի հարաբերությունները), առանձնացված կարգերի հումքի որակը ուսումնասիրված է մեթոդական ուղեցույցերով սահմանված ցուցանիշներին համապատասխան,

- ուսումնասիրված են տորֆի տոխնոլոգիական հատկությունները,

- ուսումնասիրված են կուտակի ջրաերկրաբանական, ջրաբանական և լեռնաերկրաբանական պայմանները, ինչը թույլ է տալիս դիտարկել դրանց ազդեցությունը հանքավայրի շահագործման պայմանների վրա,

- կուտակի եզրագիծը որոշված է ըստ հետախուզական փորվածքների և նմուշարկման տվյալների:

*Նախապատրաստական շրջան, ծրագրի կազմում,*

*կազմակերպում և լուծարում*

Մինչև նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմելը, անհրաժեշտ է ծանոթանալ ֆոնդային և հրատարակված նյութերին, ինչպես նաև գործող հրահանգներին և ԳՈՍՏ-երին:

Կատարողների աշխատանքի ծախսը կազմում է.

I կարգի երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս

տեխնիկ-երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս:

Ընդամենը՝ - 2 մարդ - 1 ամիս:

Նախագծի կազմում.

I կարգի երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս

տեխնիկ-երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս:

Ընդամենը՝ - 2 մարդ - 1 ամիս:

Կազմակերպում և լուծարում

Հանաձայն “Инструкция по составлению проектов и смет на геологораз – ведочные работы” հրահանգի պահանջների, աշխատանքների կազմակերպման ծախսերը կազմում են դաշտային աշխատանքների նախահաշվային արժեքի 1%-ը:

Դաշտային աշխատանքների ավարտից հետո նախատեսվում են լուծարման աշխատանքներ, որոնց ծախսերը կազմում են դաշտային աշխատանքների արժեքի 0.8%-ը:

### *Երկրաբանահանույթային աշխատանքներ*

Հայցվող տարածքի կոորդինատները որոշվել են տեղանքում սերտիֆիկացված GPS սարքի կիրառմամբ ըստ WGS-84 ARMREF 02 համակարգի:

Երևակման տարածքի երկրաբանական կառուցվածքի ճշտման, քարտեզագրման նպատակով նախատեսվում է տեղամասի 1.99հա մակերեսով տարածքում կատարել երկրաբանահանույթային աշխատանքներ: Երևակման երկրաբանական քարտեզի կազմման համար անհրաժեշտ երկրաբանական երթուղիների ընդհանուր երկարությունը կկազմի մոտ 1.3կմ:

### *Հետախուզական փորվածքների անցում*

Օգտակար հանածոյի մարմնի եզրագծման, ուսումնասիրման և նմուշարկման նպատակով նախատեսվում է հետախուզահորերի անցում: Այդ աշխատանքները կիրականացվեն մեխանիկական եղանակով՝ էքսկավատորով V կարգի ամրության ապարներում: Նախատեսվում է 17 հետախուզահորերի անցում, որոնց առավելագույն խորությունը նախատեսվում է 3.7մ, կտրվածքը՝ 1.5մ<sup>2</sup>, ընդհանուր 61.1զծ.մ կամ 91.65մ<sup>3</sup> ծավալով: Հետախուզահորերի անցման ժամանակ առաջանալու է 91.65մ<sup>3</sup> զանգված, որից մոտ 12.75մ<sup>3</sup> ներկայացված է խճուճային/քոլքային շերտով և մոտ 2.65մ<sup>3</sup>-ը՝ տորֆերին հիմնատակող մածուծիկ հատակային կավերով:

### *Հետախուզական փորվածքների փաստագրում*

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր հետախուզահորերը: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:50 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալը նախատեսվում է 61.1զծ.մ: Փաստագրման ընթացքում առանձնացվում և նկարագրվում են մակերևութային (վերին խճուճային/քոլքային) շերտը, բնական տիպերի/կարգերի սահմանները, դրանց հզորությունները, ինչպես նաև տորֆային կուտակում բացահայտված չքայքայված օրգանական հումքի (արմատներ, կոճղեր, խոտային զանգված) ոչ կոնդիցիոն հանդիսացող տեղամասերը:

### *Նմուշարկում*

Տեղամասի տորֆային կուտակը նախատեսվում է ուսումնասիրել որպես հումք օրգանական պարարտանյութերի արտադրության համար: Օգտակար հանածոյի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է վերցնել նմուշներ հետախուզահորերից, տորֆային կուտակի լրիվ հզորությամբ:



Վերին խճուճային/քուլքային շերտից նմուշը վերցվում է առանձին:

Տարբեր բնական տիպերի/կարգերի տորֆերի առկայության դեպքում նմուշարկումը կատարվում է տարանջատված՝ ըստ յուրաքանչյուր առանձնացված տիպի կամ կարգի: Նմուշի զանգվածը ընդունվում է 0.4կգ:

Ոչ կոնդիցիոն տորֆերի (չքայքայված հումք, կոճղեր, արմատներ) շերտերի, սապրոպելի կամ միներալային ենթաշերտերի առկայության դեպքում դրանց նմուշարկումը նույնպես կատարվում է առանձին: Սապրոպելից վերցված նմուշի զանգվածը պետք է կազմի 0.4կգ, միներալային ենթաշերտից վերցված նմուշը՝ ոչ պակաս քան 0.2կգ:

Նմուշարկվում են նաև տորֆային կուտակը հիմնատակող կավային առաջացումները, նմուշի զանգվածը կազմում է մոտ 0.1կգ:

Յուրաքանչյուր նմուշը նմուշառման վայրում տեղադրվում է անթափանց պոլիէթիլենային տոպրակի մեջ, կշռվում և պիտակավորվում է:

#### *Լաբորատոր աշխատանքներ*

Յուրաքանչյուր նմուշով որոշվում են տորֆի ընդհանուր տեխնիկական հատկությունները՝ քայքայման/քայքայվածության աստիճան, մոխրայնություն, բնական խոնավություն: Շարքային նմուշների մնացորդներից կազմվում է համախառն նմուշ, որի կշիռը պետք է լինի ոչ պակաս քան 0.7կգ: Համախառն նմուշմներով որոշվում են մոխրում կալցիումի և ֆոսֆորի օքսիդների, ընդհանուր ծծմբի պարունակությունները:

#### *Տոպո-մարկշեյդերական աշխատանքներ*

Բոլոր հետախուզական փորվածքները, երկրաբանական սահմանները, տորֆային կուտակում առանձնացված բնական տիպերի/կարգերի, ոչ կոնդիցիոն և միներալային ենթաշերտերի սահմանները տեղադրվելու/նշվելու են գործիքային կապակցմամբ:

#### *Ինժեներա-երկրաբանական, հիդրոերկրաբանական*

#### *և ռադիոմետրիական ուսումնասիրություններ*

Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում վերգետնյա երթուղիների եղանակով կատարվում են դաշտային հիդրոերկրաբանական ուսումնասիրություններ: Երթուղիներով ծածկվում է ոչ միայն բուն տեղամասի, այլև հարակից տարածքները: Երթուղիները կատարվում են տորֆային կուտատակի

սահմանով, գետահովիտների, առուների և ձորակների տարածքով: Նկարագրվում են ռելիեֆի առանձնահատկությունները, բնական մերկացումները, աղբյուրները, ջրհորերը, գետային ցանցի ափը:

Կատարվում է տեղամասի տարածքի հեռանկարային շահագործման ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրություններ, տորֆային կուտակի ռադիոմետրիական հատկությունների պարզաբանում, որը կիրականացվի հետախուզական փորվածքների անցման ընթացքում կատարվելիք դիտարկումներով:

Անհրաժեշտության դեպքում վերոհիշյալ ուսումնասիրությունները կկատարվեն մասնագիտացված կազմակերպությունների հետ համագործակցելով:

*Հետախուզական փորվածքների հետլցում*

Նմուշարկման և փաստագրման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է հետ լցնել հետախուզական հորերից հանված տորֆային զանգվածը: Ընդ որում հորերի ացնման ժամանակ վերին խճուճային/քուքային շերտը նախատեսվում է կուտակել տորֆային զանգվածից տարանջատված: Հետլցման աշխատանքների ժամանակ հորի տարածք լցվելու են նախ տորֆային կուտակը և կավային հիմնատակող ապարները, այնուհետև դրանք ծածկվելու են վերին քուքային շերտով: Հետլցման նման հաջորդականությունը թույլ կտա վերականգնել տեղամասի տարածքի բնական, առաջնային լանդշաֆտը:

*Հաշվետվության կազմման աշխատանքային աշխատանքներ*

Մարգահովիտի տորֆերի հանքավայրի 1-ին տեղամասի տարածքում երկրաբանահետախուզական աշխատանքների և օգտակար հանածոյի լաբորատոր ուսումնասիրությունների ավարտից հետո կկատարվեն աշխատանքային աշխատանքներ, որի ընթացքում.

- կամփոփվեն և կհամակարգվեն դաշտային փաստացի երկրաբանական նյութերը, լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքները,
- կտրվի տեղամասի երկրաբանատնտեսագիտական գնահատականը,
- կկատարվի օգտակար հանածոյի պաշարների հաշվարկը,
- կկազմվի երկրաբանական հաշվետվություն՝ տեղամասի երկրաբանատնտեսական գնահատմամբ և պաշարների հաշվարկմամբ:

Կազմված հաշվետվությունը կներկայացվի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան մասնագիտական ստորաբաժանման ղիտարկմանը:

*Բեռների և ուղևորների փոխադրում*

Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բեռների փոխադրումը կկատարվի գոյություն ունեցող ասֆալտապատ և հողածածկ միջհամայնքային, դաշտամիջյան ճանապարհներով: Նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում:

Աշխատանքները սպասարկելու է ընկերության բեռնատար մեքենան:

Տրանսպորտային ծախսերն ընդունվում են դաշտային աշխատանքների նախահաշվային արժեքի 10%-ի չափով:

Անձնակազմի տեղափոխումը կատարվելու է մարդատար մեքենայով:

▪ ***Նախագծման նորմատիվ-իրավական հենքը***

Օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

– ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի

պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

– ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

– ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

– «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

– «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

– «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-522-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ.) – կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

– «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության

համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

– «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ընդ. ՀՕ-110, 21.06.2014թ., խմբ. 03.05.23թ. ՀՕ-150-Ն), որը կարգավորում է ՀՀ-ում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լսումների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության և նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:

– «Թափոնների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-159-Ն, 24.11.2004թ.-ի), որով կարգավորվում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

– ՀՀ կառավարության 10.01.2013թ.-ի թիվ 22-Ն որոշում, որով սահմանվել են օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, դրանց իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգերը:

– ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

- ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:
- ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:
- ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:
- ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի N64-Ն որոշում, որով հաստատվել են ջրակոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները:
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի,
- ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ՀՀ ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը,
- ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ կառավարության 18.08.2021թ.-ի N1352-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված ռեկուլտիվացիոն աշխատանքների՝ նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգի հետ կապված իրավահարաբերությունները,

– ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 25.10.2022թ.-ի N369-Ն հրաման, որով հաստատվել են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցները:

## 2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

### ▪ *Ռելիեֆ, երկրաձևաբանություն, սողանքներ, սելյամիկ բնութագիր*

Երկրաձևաբանական տեսակետից Մարգահովիտի տորֆի հանքավայրի 1-ին տեղամասը հարում է Բագումի և Փամբակի լեռնաշղթաներին միջև գտնվող Մարգահովտի գոգավորության տարածքին :

Բագումի լեռնաշղթան պատկանում է Փոքր Կովկասի Վիրահայոց-Ղարաբաղի լեռնահամակարգի (միաթեք աստիճանաձև բեկորային զոնա) ներքին լեռնաշղթաների թվին և 66կմ երկարությամբ ձգվում է Սեպասարի սարավանդից մինչև Փամբակ գետի Գայլաձոր կիրճը: Լեռնաշղթան ունի 2800մ միջին, 2992մ (Ուրասար) առավելագույն բարձրություն:

Բագումի հորստ-կամարածայքը համապատասխանում է երկրաբանական կառուցվածքին, դրան բնորոշ են համաչափ ուռուցիկ աստիճանաձև լանջեր: Տարածքի կառուցվածքային ռելիեֆին բնորոշ են երկրորդական կարգի կամարածայքային (Ուրասարի, Չքնաղի), գմբեթաձև (Մայմեխի), գոգածայքային կամ ճկվածքային (Գարգառի), գրաբեն-գոգածայքայ Սկսվում է Ջաջուռի լեռնանցքից (1952 մ) և ձգվում դեպի հարավ արևելք՝ մինչև Սևանի լեռնանցք (2114 մ): ՀՀ-ի խոշոր լեռնաշղթաներից է, ունի մոտ 106 կմ ձգվածություն: Ամենաբարձր մասը կենտրոնական հատվածում Թեժ լեռն է՝ 3101 մ բարձրությամբ, մյուս գագաթները հայտնի են Ամպասարը (3053 մ), Խաղխաղ լեռը (3044 մ), Գոմասարը (2885 մ), Պահակասարը (2891 մ), Կամար լեռը (2738 մ), Ծիլքարը (2558 մ), Հարսնաքարը (2483 մ) և այլն: Լեռնաշղթայի գլխավոր ճյուղավորումներից են Ծաղկունյաց և Արջանոցի լեռները:

Փամբակի լեռնաշղթան ունի անհամաչափ կառուցվածք: Խիստ զառիվեր լանջերով ցածրանում է դեպի հյուսիս, տեղ-տեղ առաջացնելով 5-6 կմ երկարությամբ փոքր լեռնաբազուկներ, իսկ ավելի թույլ թեքությամբ՝ իջնում է դեպի հարավ, որտեղ առանձին լեռնաբազուկների ձգվածությունը հասնում է մինչև 12 կմ-ի:

Լեռնաշղթայի տարբեր կողմանադրության լանջերը տարբերվում են միմյանցից: Դեպի Փամբակի հովիտ իջնող լանջերի կենտրոնական և արևելյան հատվածները ամբողջովին անտառապատ են, իսկ արևմտյան մասում՝ հատկապես Սպիտակի գոգավորություն իջնող լանջերը պատված են լեռնասևահողային տափաստաններով, այդ պատճառով հյուսիսահայաց լանջերը քիչ են մասնատված: Հարավահայաց լանջերը պատված են տափաստանային բուսականությամբ:



Մրա արևմտյան հատվածում լանջերն իջնում են մեծ թեքությամբ և թաղվում Գեղանիստի լավաների տակ: Լավաների վրա ձևավորվել են լեռնային սևահողեր: Կենտրոնական մասում հիմնականում չոր տափաստաններ են, հետևաբար տեղանքը խիստ մասնատված է:

Մարգահովիտ գյուղի մոտակայքում, Ֆիոլետովո-Լերմոնտովո գյուղերի ուղղությամբ Բագումի և Փամբակի լեռնաշղթաները ձևավորում են միջլեռնային գոգահովիտ, որի տարածքով հոսում է Աղստև գետը: Գոգավորության մակերևույթի թեքությունը չի գերազանցում 4°-ը:

Շրջանի լեռների մակերևույթի թեքության անկյունների և երկրաձևաբանական սխեմատիկ քարտեզները բերվում են ստորև նկար 8-9-ում:

Մարգահովիտի տորֆի հանքավայրի 1-ին տեղամասի տարածքում սողանքային մարմինների առկայության վերաբերյալ հիմք է հանդիսանում Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագիրը (Միջազգային համագործակցության ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005): Ըստ նշված տեղեկագրի տվյալների՝ հայցվող տեղամասի և մոտակա հայտնի սողանքային մարմինների միջև հեռավորությունը կազմում է 1.8-2.7կմ (նկար 10):


Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի: Համաձայն դրա՝ Մարգահովիտի տորֆի հանքավայրի 1-ին տեղամասի տարածքը գտնվում է 3-րդ սեյսմիկ գոտում, որտեղ գրունտի սպասվելիք արագացման մեծությունը կազմում է 0.5g կամ 500սմ/վրկ<sup>2</sup> (նկար 11):

- ***Շրջանի կլիման***

Հայցվող տեղամասի շրջանի կլիման բնութագրվում է որպես չափավոր տաք, համեմատաբար խոնավ (նկար 12): Ամառը երկար է և տեղումներով հարուստ: Ձմեռը տևում է մոտ 4 ամիս, բնութագրվում է ձնառատությամբ:

Ձյան ծածկոցի հաստությունը հաճախ հասնում է 50սմ-ի: Լեռնաշղթաների մերձգագաթային մասերը ծածկված են ալպիական մարգագետիններով, որոնք բարենպաստ պայմաններ են ստեղծում գյուղատնտեսության զարգացման համար:

ԵՐԵՎԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՍԽԵՄԱՏԻԿ ԵՐԿՐԱԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- 1 - Միջին բարձրության /1200-2100մ/ ներլեռնային մեղմաթեք դարավանդավորված իջվածքներ
- 2 - Ուղիղ լանջերով և ալիքաձև կատարներով միջին բարձրության /1500-2500մ/ լեռնաշղթաներ, կտրտված խորը V-ձև հովիտներով և ձորերով
- 3 - Ուղիղ և կտրուկ լանջերով բարձր /2500մ-ից ավել/ լեռնաշղթաներ, կտրտված խորը U-ձև հովիտներով և ձորերով

Նկար 8.

ԵՐԵՎԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԼԱՆՁԵՐԻ ԹԵՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՐՏԵԶ




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- 1 - Թույլ թեքված հարթավայրեր /3-5 աստիճան/
- 2 - Մեղմաթեք լանջեր /5-10 աստիճան/
- 3 - Չափիկող լանջեր /10-15 աստիճան/
- 4 - Թեք լանջեր /15-25 աստիճան/

Նկար 9.



ԵՐԵՎԱԿԱՄԱՆ ՇՐՋԱՆԻ ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՄԻԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ




Նկար 10.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՎԱՆԱԿԱՆ ՄԵՅՄՏԻԿ ՎՏԱՆՔԻ ԳՈՏԻՎՈՐՄԱՆ ՔԱՐՏԵԶ



Նկար 11.



**Նկար 12.**

Օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է +7-ից +10°C, ձմռան ամիսներին իջնելով մինչև -20-25°C, իսկ ամռանը բարձրանում է մինչև +30°C (հիմնականում օգոստոս ամսին): Լեռնագագաթներին և ջրբաժանների վրա ձյան ծածկույթը պահպանվում է մինչև մայիս-հունիս ամիսները:

Ստորև 1-7 աղյուսակներում ամփոփված է տեղեկատվություն օդի ջերմաստիճանի, մթնոլորտային տեղումների և ձնածածկի վերաբերյալ (ըստ մոտակա Վանաձոր և Դիլիջան օդերևութաբանական կայանների տվյալների):



Աղյուսակ 1.

Օդի ամսեկան և տարեկան ջերմաստիճանները

Ըստ ամիսների												Միջին տարեկան, °C	Բացարձ. նվազ., °C	Բաց. առավել., °C
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Վանաձոր կայան														
-3.1	-2.0	1.7	7.6	12.1	15.1	18.0	17.9	14.4	9.0	3.8	-0.8	7.8	-30	36
Դիլիջան կայան														
-1.5	-1.0	2.2	7.7	12.0	15.2	18.3	18.1	14.3	9.3	4.3	0.4	8.3	-23	38

Աղյուսակ 2.

Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Միջին տարեկան	Միջին ամսական ժամը 15-ին	
													ամենացուրտ ամսվա	ամենաշոգ ամսվա
Վանաձոր կայան														
70	71	72	69	74	75	75	74	73	73	73	71	73	59	56
Դիլիջան կայան														
63	65	70	72	78	79	77	78	79	78	73	70	74	51	60

Աղյուսակ 3.

Տեղումներ

Տեղամների քանակը միջին ամսական/օրական առավելագույն, մմ													
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարեկան	
Վանաձոր կայան													
17	25	36	62	95	92	56	41	34	45	35	19	557	
42	26	47	38	46	61	53	40	36	40	32	31	61	
Դիլիջան կայան													
22	30	45	65	106	103	66	51	46	47	36	22	639	
35	33	42	43	58	62	55	47	45	45	49	33	62	

Աղյուսակ 4.

Ձնածածկույթ

Կայանը	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
Վանաձոր	24	60	62
Դիլիջան	53	57	103

Արևափայլի տևողություն

Ըստ ամիսների												Տարեկան գումարային
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
Վանաձոր կայան												
156	137	161	158	191	221	197	181	201	178	137	132	2050
Դիլիջան կայան												
125	131	155	156	199	222	232	221	181	163	115	112	2012

Քամիներ

Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, հՊա	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ								Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով օրերի քանակը, օր
		Ուղղությունները										
		Հս	Հս-Արլ	Արլ	Հվ-Արլ	Հվ	Հվ-Արմ	Արմ	Հս-Արմ			
Վանաձոր կայան												
862.4	Հունվար	4	3	10	7	4	13	49	10	3.1	2.2	13
		1.5	1.7	1.5	2.0	2.2	3.8	4.0	2.4			
	Ապրիլ	7	7	23	12	5	9	27	10	2.3		
		1.5	1.9	1.6	2.2	1.3	2.7	2.3	1.2			
	Հուլիս	10	17	43	21	2	1	3	3	1.9		
		1.9	1.9	1.8	2.1	1.6	1.8	1.7	1.5			
	Հոկտեմբեր	6	9	28	18	4	5	20	10	1.6		
		4	3	10	7	4	13	49	10			
Դիլիջան կայան												
875.6	Հունվար	3	19	2	3	22	32	15	4	2.1	1.8	4
		1.6	1.7	1.8	2.4	2.8	2.5	2.0	1.5			
	Ապրիլ	4	41	6	4	13	20	9	3	2.0		
		1.6	2.2	2.0	2.4	2.5	2.3	1.6	1.5			
	Հուլիս	5	63	10	2	2	7	8	3	1.7		
		1.9	2.5	2.4	1.4	1.4	1.3	1.1	1.4			
	Հոկտեմբեր	5	46	6	3	10	17	10	3	1.5		
		1.7	2.2	1.9	1.7	1.9	1.7	1.4	1.4			

Անարև օրերի քանակը

Ըստ ամիսների												Տարեկան գումարային
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
Վանաձոր կայան												
5	5	5	4	2	2	3	4	5	3	5	5	45
Դիլիջան կայան												
4	6	5	4	2	1	2	2	3	3	6	5	43

▪ **Մթնոլորտային օդ**

Մթնոլորտային օդի որակի մշտադիտարկման մոտակա կայանը գտնվում է Վանաձոր քաղաքում (նկար 13-14):

Քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Գործում է 24 դիտակետ և 3 դիտակայան:

Ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերոսթաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտանական կայքի տվյալների՝ Վանաձոր քաղաքում դիտարկումներ կատարվել են 2023 թվականի հուլիսին:

Ըստ դիտարկումների արդյունքների՝ նշված ժամանակահատվածում Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները չեն գերազանցել սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (նկար 15):

Մարգահովտի տորֆի հանքավայրի 1-ին տեղամասի տարածքում «Համգաչիման Էկո» ՍՊ ընկերության պատվերով 2023 թվականի սեպտեմբերին կատարվել է մթնոլորտային օդի որակի դիտարկում:


Կատարված դիտարկումներով մթնոլորտային օդում արձանագրվել է փոշի՝ 0.01մգ/մ<sup>3</sup>, ծծմբի երկօքսիդ՝ 0.009մգ/մ<sup>3</sup>, ազոտի երկօքսիդ՝ 0.005մգ/մ<sup>3</sup>:

ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց




Սկար 13.





Նկար 14.



Նկար 15.

▪ **Ջրային ռեսուրսներ**

Տորֆի երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքի հիմնական ջրագրական միավորը Աղստն գետն է: Աղստն գետը Կուր գետի աջակողմյան վտակներից է, սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայի Թեժլեռ գագաթի հյուսիսային լանջերից՝ ծովի մակարդակից 2985մ բարձրությունից: Աղստնի գետավազանը սահմանային է Հայաստանի և Ադրբեջանի միջև: Գետի երկարությունը Հայաստանի տարածքում 81կմ է: Աղստն գետի ավազանում հաշվարկվում է շուրջ 1000 գետ և գետակ, այդ թվում՝ ավելի քան 10 կմ երկարությամբ 20 գետ և ավելի քան 50կմ երկարությամբ երկու գետ: Աղստնի ձախակողմյան գլխավոր վտակներն են Բլղանը (15կմ երկարություն), Հաղարծինը (10կմ), Պաղջուրը (31կմ) և Ոսկեպարը (58կմ), իսկ աջակողմյան՝ Գետիկը (58կմ) և Նալտիգետը (22կմ):


Աղստն գետի ավազանում գործող հիդրոլոգիական 5 դիտակետերի և օդերևութաբանական 4 կայանների (նկար 16, N°14, 15, 16 և 17 դիտակետեր) վերաբերյալ տվյալները ներկայացվում են ստորև, աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8.

N°N°	Գետ	Դիտակետ	Ջրհավաք ավազանի մակերեսը, կմ²	Դիտակետի 0 նիշի բարձրությունը, մ	Աշխարհագրական կոորդինատները (WGS84)	
					լայնություն	երկայնություն
1.	Աղստն	Ֆիոլետովո	80.0	1653.36	44,7303	40,7172
2.	Աղստն	Դիլիջան	287.0	1145.41	44,9152	40,7621
3.	Աղստն	Իջևան	1270.0	676.32	45,1437	40,8784
4.	Գետիկ	Գոշ	581.0	921.70	45,0247	40,7450

Աղստն գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև, Դիլիջան քաղաքից ներքև, Իջևան քաղաքից վերև և Իջևան քաղաքից ներքև հատվածներում ապրիլին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտանական կայքի՝ 2023 թվականի 2-րդ եռամսյակում Աղստն գետի հիդրոլոգիական տվյալները (ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները) ներկայացվում են համաձայն Իջևան դիտակետում կատարված ուսումնասիրությունների (աղյուսակ 9):

**ԱՂԱՏԵՎ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՑԱՆՑ**




Նկար 16.

Աղյուսակ 9.


Միջին ամսական ելքերը, մ/վ								
ապրիլ			մայիս			հունիս		
փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
10.4	26.5	39	12.2	27.9	44	14.4	16.5	85

2023 թվականի 2-րդ եռամսյակում Ադստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև, Դիլիջան քաղաքից ներքև, Իջևան քաղաքից վերև և Իջևան քաղաքից ներքև հատվածներում ապրիլին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս) (նկար 17):





Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքից Աղստև գետի հունը գտնվում է 330-345մ հեռավորության վրա (նկար 18):



Նկար 18.


2023 թվականի սեպտեմբերին հայցվող տարածքին հարակից հատվածում Աղստև գետից վերցված ջրի նմուշում արձանագրվել են. նիտրատ իոն 3.2մգN/լ, նիտրիտ իոն 0.09մգN/լ, ամոնիում իոն 0.7մգN/լ, ընդհանուր ազոտ 7.1մգN/լ, ֆոսֆատ իոն 0.48մգ/լ, ընդհանուր ֆոսֆոր 0.32մգ/լ, Zn ընդ. 117մգ/լ, Cu ընդ. 26.3մգ/լ, Cr ընդ. 33.8մգ/լ, As ընդ. 13.6մգ/լ, Pb ընդ. 14.8մգ/լ, Ni ընդ. 26.1մգ/լ, Mo ընդ. 26.1մգ/լ, Co ընդ. 0.9մգ/լ, Fe 0.31մգ/լ:

Տեղամասի տարածքում ստորգետնյա (գրունտային) ջրերի առկայության մասին տեղեկություններ չկան: Տեղամասի հիդրոերկրաբանական պայմանները նաժատեսվում է ուսումնասիրել երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում: Նախատեսվում է երթուղիներով ուսումնասիրել է ոչ միայն բուն տեղամասի, այլև հարակից տարածքները: Երթուղիները կատարվում են տորֆային կուտատակի սահմանով, գետահովիտների, առուների և ձորակների տարածքով: Նկարագրվում են ռելիեֆի առանձնահատկությունները, բնական մերկացումները, աղբյուրները, ջրհորերը, գետային ցանցի ավեր:



▪ **Հողեր**

Նկարագրվող տարածքում զարգացած են գետահովտադարավանդային մարգագետնաճահճային տորֆացված, մարգագետնային սևահողանման, գորշ անտառային հողերը և սևահողերը (նկար 19):



Նկար 19.

Մարգահովիտի հանքավայրի 1-ին տեղամասի տարածքը ներկայացված է փոքր հզորության (մինչև 0.5մ) գետահովտադարավանդային մարգագետնաճահճային ճակատաված, տորֆացված հողերով, որոնք բնորոշ է կնձկահատիկային ստրուկտուրա և ծանր մեխանիկական կազմ:

Հողային զանգվածը գրեթե ձուլված է, խիտ ներարկված է մեծ քանակությամբ վերերկրյա և արտամային բուսական զանգվածով, որը և կազմում է տորֆային կուտակի մակերևութային քոլքային/խճուճային շերտը (օպեց):

Հումիսի քանակը կազմում է մինչև 11%, բնութագրվում են թույլ թթվային ռեակցիայով (рН 5.5-6.7), ունեն կլանման մեծ տարողություն՝ մոտ 41.7մգ/էկվ 100գ հողում:

2023թ. սեպտեմբերին հողային զանգվածից կատարվել է նմուշառում: 3 նմուշների վերլուծության արդյունքում ստացվել են հետևյալ միջինացված ցուցանիշները. սիլիցիում- 117890մգ/կգ, մանգան-915մգ/կգ, ֆոսֆոր-1026մգ/կգ, պղինձ-1.05մգ/կգ, նիկել-0.07մգ/կգ և ցինկ-8.3մգ/կգ:

Մարգահովիտի հանքավայրի 1-ին տեղամասի տարածքում խախտված և վերականգնված հողեր չկան: Տարածքում չկա նաև կուտակված, պահեստավորված հողաբուսական շերտ:


▪ ***Բուսական և կենդանական աշխարհ***

Մարգահովիտի հանքավայրի 1-ին տեղամասի շրջանի բնական բուսածածկը ներկայացված է ջրաճահճային, ենթալպյան և անտառային բուսականությամբ (նկար 20) : Բուն 1-ին տեղամասին բնորոշ է ջրաճահճային բուսականություն :

2023 թվականի սեպտեմբերին հայցվող տեղամասի տարածքը ուսումնասիրվել է երթուղիներով : Դաշտային դիտարկումների ժամանակ արձանագրվել են. կղմուխ ձեղինեի (*Inula helenium L.*), անմոռուկ նոսրածաղիկ (*Myosotis sparsiflora Pohl*), փետրախոտ նեղատերև (*Stipa tirsia Steven*), ջրկոտեմ դեղատու (*Nasturtium officinale (L.) W. T. Aiton*), եղջրատերև ստորջրյա (*Ceratophyllum demersum L.*), բոշխ սուր (*Carex acutiformis Ehrh*), բոշխ թավոտ (*Carex hirta L.*), կյուն փայլուն (*Juncus articulatus L.*), դադձ դաշտային (*Mentha arvensis L.*), արենածաղիկ սովորական (*Lythrum salicaria L.*), ապուզան թավոտ (*Epilobium hirsutum L.*), ագրիստուկ հսկա (*Agrostis gigantea Roth*), բրոմոպսիս խայտաբղետ (*Bromopsis variegata*), դաշտավլուկ միամյա (*Poa annua L.*), ավելուկ զանգուռ (*Rumex crispus L.*), մակարդախոտ իսկական (*Galium verum L.*) :



ԵՐԵՎԱԿՄԱՆ ՇՐՋԱՆԻ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՊԵՐԻ ՔԱՐՏԵԶ



- ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ**
- 1 - Ջրաճահճային բուսականություն
  - 2 - Ենթաալպյան տարախոտային-հացազգային համակեցություններ
  - 3 - Անտառային բուսականություն

Նկար 20.

Ինչպես արդեն նշվել է, հայկող տեղամասի մակերեսը ներկայացված է հողային զանգվածին գրեթե ձուլված է վերերկրյա և արտամային բուսական կիսաչորացած, քայքայված, փտած զանգվածով, որը և կազմում է տորֆային կուտակի մակերևութային քուլքային/խծուծային շերտը (օպեց):

Բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով ուսումնասիրվել է ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշումը: Ըստ նշված փաստաթղթի, Մարգահովիտի



հանքավայրի 1-ին տեղամասի շրջանում (Մարգահովիտ, Ֆիոլետովո և Լերմոնտովո գյուղերի շրջակայք) հայտնի են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված կկվածադիկ (*Coccyganthe flos-cuculi* L. (= *Coronaria flos-cuculi* (L.) A.Br.) կրիտիկական վիճակում գտնվող տեսակը: Հայտնի է մեկ պոպուլյացիա: Աճում է ճահճացած տեղամասում, մայրուղու հարևանությամբ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է ճանապարհաշինությունը և մեխորացիոն աշխատանքների անցկացումը: Հանդիպում է միայն Լերմոնտովո գյուղի շրջակայքում, հայցվող տարածքից մոտ 1.5կմ հեռավորության վրա: Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1700 մ բարձրության վրա: Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

Հայցվող տեղամասի տարածքում մանրագննին դիտարկման արդյունքում վերը նշված` ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված բուսատեսակները չեն դիտարկվել:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքում դաշտային դիտարկումների ժամանակ նշվել են.

- երկկենցաղներից` լճագորտ (*Pelophylax ridibundus*) և կանաչ դոդոշ (*Bufo viridis*),
- սողուններից` սովորական լորտու (*Natrix natrix*),
- կաթնասուններից` սովորական դաշտամուկ (*Microtus arvalis*), հասարակական դաշտամուկ (*Microtus socialis*), սովորական սկյուռ (*Sciurus vulgaris*), սպիտակափոր ոզնի (*Erinaceus concolor*), դիտարկվել են աղվեսի (*Vulpes vulpes*) կենսագործունեության հետքեր,
- թռչուններից` սովորական կկու (*Cuculus canorus* L.), ջրաճնճղուկ (*Cinclus cinclus* L.), տնային ճնճղուկ (*Passer domesticus* L), սովորական կաչաղակ (*Pica pica* L.), սև ագռավ (*Corvus corax* L.), դաշտային արտույտ (*Alauda arvensis* L):

Բազմազան էր միջատների ֆաունան` ձողիղներ, մորեխներ, գնայուկ բզեզներ, մրջյուններ, ցերեկային թիթեռներ, բվիկներ:

Կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով ուսումնասիրվել է ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշումը: Ըստ նշված փաստաթղթի, Մարգահովիտի հանքավայրի 1-ին տեղամասի շրջանում` Լոռու և Տավուշի մարզերի Վանաձոր և Դիլիջան քաղաքների շրջակայքում հայտնի են սանրաբող չրիկան (*Ctenicera*

pectinicornis), իշամեղու գետնային (*Bombus terrestris* Linnaeus), Շելկովնիկովի կուտորա (*Neomys schelkovnikovi* Sat.), ասիական լայնականջ չղջիկ (*Barbastella leucomelas* Gretzschmar), գորշ արջ (*Ursus arctos* Linnaeus), անտառակատու (*Felis silvestris* Schreber) տեսակները:


Հայցվող տեղամասի տարածքում մանրագնդին դիտարկման արդյունքում, ինչպես նաև հարակից Ֆիոլետովո, Մարգահովիտ և Լերմոնտովո գյուղերի բնակիչների հետ իրականացված քննարկումների արդյունքներով կարող ենք նշել, որ վերը թվարկված՝ ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակները հայցվող տեղամասում չեն դիտարկվել:

▪ ***Անտառային ռեսուրսներ***


Հայցվող տեղամասից 385մ-ից մինչև մոտ 3կմ հեռավորության վրա գտվում են անտառային հողեր (ըստ կադաստրային քարտեզների տվյալների) (նկար 21) :

Տարածաշրջանի անտառները ներառված են Գուգարքի անտառնտեսության կազմում, որը կազմավորվել է 1947թ.՝ նախկին Կիրովական և Շահալի անտառպետությունների բազայի վրա (նկար 22) : Անտառնտեսության կազմում ընդգրկված են 7 անտառպետություններ, ընդ որում ամենափոքրը Խնձորուտի անտառպետությունն է 2736 հեկտար կամ ընդհանուր մակերեսի 8.6%-ը, մեծը՝ Եղեգնուտի անտառպետությունը 5942 հեկտար (18.9%), իսկ անտառպետությունների միջին մակերեսը 4528 հեկտար:

Անտառնտեսությունում հիմնական անտառկազմող տեսակներն են արևելյան հաճարենին, որի համակեցությունները զբաղեցնում են 6955.8հա՝ 1327750իւ.մ ընդհանուր պաշարով, կամ զբաղեցնում են անտառածածկ տարածքի 31.6 և ընդհանուր պաշարի 54.2%-ը, կաղնու համակեցությունները զբաղեցնում են 5958.8հա՝ 439410իւ.մ պաշարով (անտառածածկ տարածքի 25.6 և պաշարի 17.4%-ը), բոխու ծառուտները զբաղեցնում են 4399.4 հեկտար (այդ թվում 3484.2 հեկտար սերմնային ծագման), ընդհանուր պաշարը 341420իւ.մ (անտառածածկի 19.7 և պաշարի 13.4%), սոճուտները 2244.9 հեկտար՝ 194680 իւ.մ պաշարով (համապատասխանաբար 10.6 և 7.9%) և մնացած տեսակները միասին կազմում են 2693.7 հեկտար՝ 178030իւ.մ ընդհանուր պաշարով անտառածածկի 12.2 և ընդհանուր պաշարի 7.1 %-ը:



Նկար 21.



Նկար 22.

Արտադրական նշանակության անտառներում մակերեսի և պաշարի հետևյալ բաշխվածությունն է.

հաճարկուտները զբաղեցնում են 3129.8հա՝ 623100իւ.մ պաշարով, կաղնուտները՝ 1058.6հա՝ 134630իւ.մ ընդհանուր պաշարով, բոխուտները՝ 1498.9հա՝ 126210իւ.մ ընդհանուր պաշարով, սոճուտները 308.3հա՝ 49980իւ.մ ընդհանուր պաշար և մնացած տեսակները միասին 399.1հա և 36660իւ.մ պաշար:

Անտառտնտեսությունում անտառածածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի հետևյալն է՝

երիտասարդ անտառները (I և II հասակային դասեր) զբաղեցնում են 5935.6հա՝ 159710իւ.մ պաշարով (անտառածածկի 26.6 և պաշարի 6.4%-ը), միջին տարիքի ծառուտները, զբաղեցնում են 7098.5հա՝ 836750իւ.մ պաշարով (համապատասխանաբար 34.9 և 26.1%): Հասունացող ծառուտները զբաղեցնում են 3803.7հա՝ 648720իւ.մ պաշարով (համապատասխանաբար 17 և 33.7 %), իսկ հասուն և գերհասուն ծառուտները զբաղեցնում են ընդհանուր տարածքի 4857.9հա՝ 836820իւ.մ պաշարով (22.4 և պաշարի 33.7%-ը):

Անտառածածկ մակերեսի 26.6%-ը (5935.6հեկտար) և ընդհանուր պաշարի 6.4%-ը (1597103իւ.մ), տեղաբաշխված է երիտասարդ տարիքային խմբում (I և II հասակային դասեր), համապատասխանաբար 42.7% (9522.7հա) և 46.7% (1160170իւ.մ) VII և բարձր հասակային դասերում: 1 հեկտարի միջին պաշարը 112.2իւ.մ է, ընդ որում ամենաբարձր ցուցանիշը VII հասակային դասում է (178.3իւ.մ), որը համապատասխանում է հաճարկուտների և կաղնուտների հասունացման խմբին:


Հաճարկուտների մակերեսի 76%-ը (5238հա) և պաշարի 85.6%-ը (1137100իւ.մ) գտնվում են VII և բարձր հասակային դասերում, 1 հեկտարի միջին պաշարը 217իւ.մ է: Նույն հասակային դասերի սահմաններում են գտնվում բարձրաբուն կաղնիների մակերեսի 74%-ը (2366.1հա) և պաշարի 81.1%-ը (297270իւ.մ), 1 հեկտարի միջին պաշարը 125.4իւ.մ է: Նույն օրինաչափությունը պահպանվում է նաև արտադրական անտառներում:

Միջին տարիքը 90 է, ընդ որում բարձրաբուն կաղնուտների միջինը 136 է, իսկ հաճարկուտներինը 132 տարի:

- **Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ**

Մարգահովիտի հանքավայրի 1-ին տեղամասի տարածքում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան:

Տեղամասից մոտ 0.4կմ հեռավորության վրա գտնվում է Մարգահովիտի արգելավայրը, մոտ 5.7կմ հեռավորության վրա՝ կովկասյան մրտավարդենու արգելավայրը և մոտ 8.2կմ հեռավորության վրա՝ «Դիլիջան» ազգային պարկը (նկար 23):



Նկար 23.

Մարգահովիտի արգելավայրը հիմնադրվել է 09.04.1971թ.-ին ՀՍՍՀ Մինիստրների սովետի N 212 կարգադրությամբ՝ ՀՀ Լոռու մարզ, Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթաների լանջեր, Փամբակ գետի ավազան, ծովի մակարդակից 1900-2200 մ բարձրության վրա, զրավում է 3368հա տարածք: Արգելավայրի կառավարող կազմակերպությունն է «Հայանտառ» ՊՈԱԿ, պահպանության օբյեկտը՝ խոնավասեր անտառները և դրանց բնորոշ կենդանական աշխարհը:

Կովկասյան մրտավարդենու արգելավայրը հիմնադրվել է 29.01.1959թ.-ին ՀՍՍՀ Մինիստրների սովետի N 20 որոշմամբ, ՀՀ Լոռու մարզ, Փամբակի և

Ծաղկունյաց լեռնաշղթաների հյուսիսահայաց լանջեր, ծովի մակարդակից 1900-2200մ բարձրության վրա, գրավում է մոտ 1000հա տարածք: Արգելավայրի կառավարող կազմակերպությունն է «Հայանտառ» ՊՈԱԿ, պահպանության օբյեկտը՝ ռելիկտային Մրտավարդ կովկասյան տեսակի թփուտներ:

«Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունն ունի 33765 հա տարածք և հիմնականում ղբաղեցնում է ՀՀ Տավուշի մարզը, փոքր հատվածներով նաև՝ Լոռու և Գեղարքունիքի մարզերը: Այն տարածվում է մի քանի լեռնաշղթաների լանջերին՝ 1070մ - 2900մ բարձրությունների վրա: Այն ունի նաև 8167 հա բուֆերային գոտի:

«Դիլիջան» Ազգային պարկը պետական ոչ առևտրային կազմակերպություն է և ստեղծվել է 2002 թվականին (փոխարինելով 1958 թ-ին հիմնադրված պետական արգելոցին), նպատակ հետապնդելով ապահովել լանդշաֆտների և կենսաբազմազանության պահպանումը, համահունչ տնտեսական զարգացումը, ինչպես նաև պատմամշակութային ժառանգության պահպանությունն Աղստև և Գետիկ գետերի ավազաններում: Ազգային պարկը հիմնելիս նախկին արգելոցի 28000 հա տարածքն ավելացել է՝ հասնելով 33765 հա-ի:

Ազգային պարկը տարածված է Դիլիջան քաղաքի և 9 գյուղական համայնքների վարչական սահմաններում: Դիլիջան քաղաքը և հինգ գյուղական բնակավայրեր (Թեղուտ, Հաղարծին, Գոշ, Խաչարձան և Աղավնավանք) գործնականում գտնվում են ԴԱՊ-ի սահմաններում: Չորս բնակավայրեր տեղակայված են պահպանվող տարածքի շրջակայքում՝ Ֆիոլետովոն՝ արևմուտքից, Հովքը՝ հյուսիս-արևելքից, Սեմյոնովկան և Ծովագյուղը՝ հարավից:

Ազգային պարկը վաղուց հայտնի է իր անտառային լանդշաֆտով, բուժիչ հանքային ջրերի աղբյուրներով, ինչպես նաև բնական և պատմաճարտարապետական հուշարձաններով: Գլոբալ համատեքստում այն գտնվում է «Կովկասյան կիզակետում», որը ԲՀՀ-ի ու Կենսաբազմազանության միջազգային պահպանության (Conservation International) կազմակերպության կողմից կենսաբազմազանության առումով ճանաչվել է աշխարհի կարևորագույն վայրերից մեկը: Տարածաշրջանային, ազգային և տեղական տիրույթում այն ունի դեռևս չօգտագործված, սակայն զարգացման մեծ տնտեսական ներուժ, որի կիրառումը



կնպաստի գյուղական համայնքների տնտեսության խթանմանը, իսկ ազգային պարկի բրենդավորումը այն կարող է դարձնել որպես նշանակալի զբոսաշրջային վայր:

Բարձրությունների մեծ տատանումները, լավ արտահայտված ուղղահայաց գոտիավորումը, տարբեր լանջային փովածքները և խիստ մասնատված տեղանքը պարկի տարածքն օժտել են բնական պայմանների բացառիկ բազմազանությամբ: 1200-1800մ բարձրության վրա գտնվող լեռնային միջին գոտին հիմնականում ծածկված է կաղնու և հաճարենու անտառներով: Բարձր լեռնային գոտուն բնորոշ են նոսր անտառները և բարձր խոտաբույսերը՝ փոված 1900մ բարձրության վրա: Տարածքն աչքի է ընկնում բարենպաստ կլիմայական պայմաններով և ռեկրեացիոն ռեսուրսներով: Պարկը հանդիսանում է 1150 տեսակի անոթավոր բույսերի (այդ թվում նաև յոթ էնդեմիկ տեսակների), ինչպես նաև 286 տեսակի ողնաշարավոր կենդանիների կենսամիջավայր: Բնության ժառանգության տարածքներ են համարվում Աղավնավանքի կենու պուրակը, Հաղարծնի հաճարենու և Խաչարձանի կաղնու անտառները, Պարզ և Գոշի (Տգրկա) լճերը:

Այստեղ են գտնվում նաև մի շարք մշակութային հուշարձաններ և այլ մշակութային արժեքներ, որոնցից կարևորվում են Հաղարծնի վանքը (10-13 դար), Գոշավանքը (12-13 դար), Ջուխտակվանքը (11-13 դար), Մաթոսավանքը (10-13 դար), Աղավնավանքը (11 դար):

Բնության հատուկ պահպանվող տարածքներ են համարվում նաև բնության հուշարձանները, որոնց ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշմամբ: ՀՀ Լոռու մարզում հաշվառված են բնության հետևյալ հուշարձանները.


Աղյուսակ 10.


Հ/Հ	Անվանումը	Գտնվելու վայրը
1	2	3
1	«Բազալտանման ապարների (Դիաբազների) գոլավոր դայք»	Լոռու մարզ, Ալավերդի քաղաքային համայնք, Լավար գետի միջին հոսանք, կիրճի աջ ափին՝ Դարկ լեռնագագաթի հարավ-արևելյան ստորոտին, Ալավերդի «Լենհանքեր» ավտոճանապարհից մոտ 300 մ դեպի արևմուտք, Մադան գյուղի արևմտյան ծայրամասից մոտ 500 մ դեպի արևմուտք
2	«Գետնանձավ» անձավային թունել	Լոռու մարզ, Լոռի Բերդ գյուղից 2 կմ հվ-արլ, Չորագետի ձախ ափին, հունից 40 մ բարձրության վրա

1	2	3
3	«Չորագետի հրային ներժայթուկ»	Լոռու մարզ, Չորագետ և Փամբակ գետերի հատման կետում, Ալավերդի-Վանաձոր ավտոմայրուղու աջ կողմում՝ մոտ 10 մ չհասած առաջին թունելի մուտք
4	«Տրավերտիններ դոլերիտային բազալտներում»	Լոռու մարզ, Մարց գյուղի խաչմերուկից մոտ 50 մ վերև, Մարց-Աթան գրունտային ավտոճանապարհի ձախ կողմում
5	«Թռչկան» ջրվեժ	Լոռու մարզ, Մեծ Պառնի գյուղական համայնք, Զիջխան գետի աջակողմյան Թռչկան վտակի վրա
6	«Դսեղի Ծովեր» լիճ	Լոռու մարզ, Դսեղ գյուղից 3 կմ արևելք-հարավ-արևելք, Սևորդաց լեռնաշղթայի Ծովիղաշ լեռնագագաթի հյուսիսային լանջի ափսեաձև գոգավորությունում
7	«Շամլուղի լճակ»	Լոռու մարզ, Շամլուղ գյուղական համայնք
8	«Օձի պորտ»	Լոռու մարզ, Արդվի գյուղական համայնքի արևելյան մասում, Հովնան Օձունեցու կաթողիկոսի մատուռից 120 մ հյուսիս-արևմուտք
9	«Քոշաքարի մրտավարդ»	Լոռու մարզ, Մարգահովիտ գյուղական համայնքի հյուսիսային սահմանագծից մոտ 1 կմ հեռավորության վրա, Գուգարքի անտառտնտեսության Եղեգնուտի անտառպետության բարձրադիր գոտում

Տորֆերի երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տեղամասին ամենամոտ գտնվող բնության հուշարձանը «Քոշաքարի մրտավարդ» հուշարձանն է (նկար 24, 25)։ Մրտավարդ Կովկասյանը /*Rhododendron caucasicum* Pall/ մշտադալար, խոշոր փայլուն տերևներով գետնատարած թուփ է՝ մինչև 1 մ բարձրությամբ։ Որպես երրորդական դարաշրջանից պահպանված ռելիկտ՝ գրացված է Հայաստանի բույսերի Կարմիր գրքում՝ վտանգված տեսակ կատեգորիայով։ Տարածքում մրտավարդի մացառները ցրված են առանձին փոքր կղզյակներով։ Տարածքում հանդիպում են գնարբուկ Պալլասի /*Primula pallasii* /, հողմածաղիկ գծավոր /*Anemone fasciculate*/, ձկնի գորտնուկային /*Trollius ranunculinus*/, տերևատ կենձկավոր /*Daphne glomerata*/, հապալասենի մրտենական /*Vaccinium myrtillus*/, դանձիլ /*Allium victorialis*/, անողնուցուկ Գրոսհեյմի /*Grossheimia macrocephala*/, զիվան հսկայական /*Cephalaria gigantea*/, աստղաբույս ամենամեծ /*Astrantia maxima*/, քոսքոսկ կովկասյան /*Scabiosa caucasica*/, թթվիճ խոշորածաղիկ /*Betonica macrantha*/, խորդենի վրացական /*Geranium ibericum*/, կեղծ դանձլամեր սպիտակ /*Veratrum album*/, ոջլադեղ խիտ /*Pedicularis condensate*/ և այլ տեսակներ։ Հուշարձանի տարածքը գտնվում է բավականին խոնավ ենթալայան գոտում, շրջապատված է տիպիկ հացազգի կամ բազմախոտ մարգագետիններով։







Նկար 25.

Տորֆերի երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տեղամասի հեռավորությունը «Քոշաբարի մրտավարդ» հուշարձանի պահպանման գոտուց կազմում է 7 կմ :



### 3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

- *Ենթակառուցվածքներ*

Ինչպես նշվել է, տոնֆի երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը գտնվում է ՀՀ լոռու մարզում: Լոռու մարզը հյուսիսից պետական սահմանով սահմանակից է Վրաստանին, արևելքից Տավուշի մարզին, հարավից՝ Արագածոտնի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերին, իսկ արևմուտքից՝ Շիրակի մարզին: Մարզում ծովի մակերևույթից բարձր կետը Աչքասար լեռան գագաթն է (3 196 մ), ամենացածրը՝ Դեբեդ գետի ստորին հոսանքի շրջանը (մոտ 375 մ):

Մարզի տնտեսության առաջատար ճյուղերը գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունն են: Գյուղատնտեսության ոլորտում առանձնանում են հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները: Մարզի արդյունաբերության հիմնական ուղղություններն են հանքագործական արդյունաբերությունը և մշակող արդյունաբերությունը:

Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր երկաթուղին: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):

Տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան հատվածների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 6.3 %,
- գյուղատնտեսություն 8.4 %,
- շինարարություն 4.2 %,
- մանրածախ առևտուր 2.6 %,
- ծառայություններ 1.3 %:

ՀՀ Լոռու մարզի մշտական բնակչությունը 01.01.203թ.-ի դրությամբ կազմում է 211.5հազ.մարդ, որից 123.8հազ.մարդը ապրում են քաղաքային, 87.7հազ.մարդը՝ գյուղական բնակավայրերում: Ազդակիր Տաշիր քաղաքում բնակչության թիվը կազմում է 7.3հազ.մարդ:

Մարզի տնտեսական ուղղվածության, համախառն արտադրանքի, արդյունաբերության մասին համառոտ տեղեկություններ ներկայացված են ստորև, աղյուսակներում:

Աղյուսակ 11.

ՀԱՄԱԽԱՈՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ							
GROSS DOMESTIC PRODUCT							
	Համախառն ներքին արդյունք (շուկայական գներով), մլն. դրամ Gross domestic product (at market prices), mln. drams			Համախառն ներքին արդյունքի կառուցվածքն ըստ տարածաշրջանների, % Structure of gross domestic product %			
	2018	2019	2020	2018	2019	2020	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	6 017 035.2	6 543 321.8	6 181 902.6	100.0	100.0	100.0	REPUBLIC OF ARMENIA
ԼՈՌԻ	248 216.3	229 581.6	212 872.2	4.1	3.5	3.4	LORI

Աղյուսակ 12.

ՀԱՄԱԽԱՈՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԵՎ ՇՆՉԻ ՀԱՇՎՈՎ							
GROSS DOMESTIC PRODUCT PER CAPITA							
	Համախառն ներքին արդյունքը բնակչության մեկ շնչի հաշվով, դրամ <sup>1</sup> Gross domestic product per capita, dram <sup>1</sup>			Համախառն ներքին արդյունքը բնակչության մեկ շնչի հաշվով, Հայաստանի Հանրապետության միջին ցուցանիշի նկատմամբ, % Gross domestic product per capita, to the average indicator of Republic of Armenia, %			
	2018	2019	2020	2018	2019	2020	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	2 026 620	2 208 716	2 087 423	100.0	100.0	100.0	REPUBLIC OF ARMENIA
ԼՈՌԻ	1 147 025	1 070 810	999 869	56.6	48.5	47.9	LORI

Աղյուսակ 13.

ՀԱՄԱԽԱՈՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ ՍԵՎ ԶԲԱՂՎԱԾԻ ՀԱՇՎՈՎ							
GROSS DOMESTIC PRODUCT PER EMPLOYEE							
	Համախառն ներքին արդյունքը մեկ զբաղվածի հաշվով, դրամ Gross domestic product per employee, dram			Համախառն ներքին արդյունքը մեկ զբաղվածի հաշվով, Հայաստանի Հանրապետության միջին ցուցանիշի նկատմամբ, % Gross domestic product per employee, to the average indicator of Republic of Armenia, %			
	2018 <sup>1</sup>	2019 <sup>2</sup>	2020	2018	2019	2020	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	5 738 708	6 073 252	5 874 100	100.0	100.0	100.0	REPUBLIC OF ARMENIA
ԼՈՌԻ	3 019 663	2 855 493	2 341 828	52.6	47.0	39.9	LORI

Աղյուսակ 14.

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԾԱՎԱԼԸ						
VOLUME OF INDUSTRIAL OUTPUT						
<i>ընթացիկ գներով, մլն. դրամ</i> at current prices, mln. drams						
	2017	2018	2019	2020	2021	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	1 834 773.5	1 937 475.3	2 091 525.7	2 101 072.7	2 419 356.3	REPUBLIC OF ARMENIA
ԼՈՌԻ	163 690.0	89 424.9	87 222.8	110 447.2	152 824.0	LORI

Աղյուսակ 15.

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ							
PRODUCTION OF INDUSTRIAL OUTPUT							
	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով <sup>1</sup> , մլն. դրամ Volume of output (work, services), at current prices <sup>1</sup> , mln. drams		Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով <sup>1</sup> , մլն.դրամ Realization of finished products, at current prices <sup>1</sup> , mln. drams		Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, % Volume index of output, %		
	2020	2021	2020	2021	2020	2021	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	2 101 072.7	2 419 356.3	2 084 519.5	2 430 579.4	100.6	103.7	REPUBLIC OF ARMENIA
ԼՈՌԻ	110 447.2	152 824.0	115 125.0	153 076.0	125.9	109.2	LORI

Աղյուսակ 16.

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ						
STRUCTURE OF INDUSTRIAL OUTPUT						
%						
	2017	2018	2019	2020	2021	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	100	100	100	100	100	REPUBLIC OF ARMENIA
ԼՈՌԻ	8.9	4.6	4.2	5.3	6.3	LORI

Աղյուսակ 17.

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԾԱՎԱԼՆ ԸՍՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ										
VOLUME OF INDUSTRIAL OUTPUT BY PRODUCTION SECTORS										
<i>ընթացիկ գներով, մլն. դրամ</i> <i>at current prices, mln. drams</i>										
	Ամբողջ արդյունաբերությունը Total industry		այդ թվում՝ /including:							
			հանքագործական արդյունաբերություն mining industry		մշակող արդյունաբերություն manufacturing industry		էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում production and distribution of electricity, water and gas		ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում water supply, sewerage waste management and remediation activities	
	2020	2021	2020	2021	2020	2021	2020	2021	2020	2021
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA	2 101 072.7	2 419 356.3	403 455.5	589 885.6	1 417 895.0	1 527 054.1	257 886.7	279 219.2	21 835.5	23 197.4
ԼՈՌԻ LORI	110 447.2	152 824.0	58 023.3	92 773.3	41 915.3	48 577.8	9 195.1	10 036.9	1 313.5	1 436.0

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼԻ ԻՆԴԵՔՍՆԵՐՆ ԸՍՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ VOLUME INDICES OF INDUSTRIAL OUTPUT BY PRODUCTION SECTORS										
նախորդ տարվա նկատմամբ, % in % compared to the previous year										
	Ամբողջ արդյունաբերությունը  Total industry		այդ թվում՝ including:							
			հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում mining and quarrying		մշակող արդյունաբերություն manufacturing industry		էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում electricity, gaz, steam and air conditioning supply		ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում water supply, sewerage, waste management and remediation activities	
	2020	2021	2020	2021	2020	2021	2020	2021	2020	2021
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA	100.6	103.7	111.6	100.2	98.2	103.9	100.0	107.9	87.7	106.2
ԼՈՌԻ LORI	125.9	109.2	160.8	108.2	100.8	111.3	107.0	106.5	102.5	109.2

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ STRUCTURE OF INDUSTRIAL OUTPUT BY PRODUCTION SECTORS										
%										
	Ամբողջ արդյունաբերությունը  Total industry		այդ թվում՝ including:							
			հանքագործական արդյունաբերություն mining industry		մշակող արդյունաբերություն manufacturing industry		էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում production and distribution of electricity, water and gas		ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում water supply, sewerage, waste management and remediation activities	
	2020	2021	2020	2021	2020	2021	2020	2021	2020	2021
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA	100	19.2	24.4	67.5	63.1	12.3	11.5	1.0	1.0	
ԼՈՌԻ LORI	100	52.5	60.7	38.0	31.8	8.3	6.6	1.2	0.9	



Աղյուսակ 20.

ԱՐԴՑՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ  
PRODUCTION OF INDUSTRIAL OUTPUT BY TYPES OF ECONOMIC ACTIVITY, 2021

	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, մլն. դրամ Volume of produced production, in current prices <sup>1</sup> , mln.drams	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, մլն.դրամ Realisation of fabricated products in current prices <sup>1</sup> , mln.drams	Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, % Volume index of industrial production, %	
LՈՐԻ ՄԱՐԶ LORI MARZ				
Ամբողջ արդյունաբերությունը <i>այդ թվում՝</i>	152 824.0	153 076.0	109.2	Total industry <i>including :</i>
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում <i>այդ թվում՝</i>	92 773.3	93 188.7	108.2	Mining and quarrying <i>including :</i>
մետաղական հանքաքարերի արդյունահանում	92 570.8	93 000.0	108.2	mining of metal ores
հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործում այլ ճյուղեր	202.5	188.7	104.7	other mining and quarrying
Մշակող արդյունաբերություն <i>որից՝</i>	48 577.8	48 414.3	111.3	Manufacturing <i>of which:</i>
անդամթերքի արտադրություն	36 268.6	36 210.8	104.2	manufacture of food products
խմիչքների արտադրություն	176.7	174.9	102.1	manufacture of beverages
մանածագործական արտադրատեսակների արտադրություն	44.5	44.5	100.0	manufacture of textiles
հագուստի արտադրություն	8 543.2	8 535.1	130.9	manufacture of wearing apparel
փայտանյութի մշակում, փայտից և խցանակղնից, ծղոտից և հյուսկեն նյութերից արտադրատեսակների արտադրություն, բացի կահույքից թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն	36.3	36.3	165.4	manufacture of wood and of products of wood and cork, except furniture; manufacture of articles of straw and plaiting materials
թիթեղաձուլական արտադրատեսակների արտադրություն	44.8	44.8	110.4	manufacture of paper and paper products
քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	516.7	518.1	127.1	manufacture of chemicals and chemical products
ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	69.2	69.2	49.4	manufacture of rubber and plastic products
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	811.7	813.5	81.7	manufacture of other non-metallic mineral products
պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն, բացի մեքենաներից և սարքավորանքից	240.9	240.9	2.9 սնգ. times	manufacture of fabricated metal products, except machinery and equipment
էլեկտրական սարքավորանքի արտադրություն	1 237.0	1 109.0	29.1 սնգ. times	manufacture of electrical equipment
մեքենաների և սարքավորանքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում	416.3	427.1	133.5	manufacture of machinery and equipment n.e.c.
կահույքի արտադրություն	49.5	49.4	33.8 սնգ. times	manufacture of furniture
արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում	122.4	140.7	158.1	other manufacturing
ուսկերչական արտադրատեսակների արտադրություն	122.0	121.9	157.6	manufacture of jeweller products
Էլեկտրականության, գազի, ջրոլորտի և լավորակ օդի մատակարարում	10 036.9	10 036.9	106.5	Electricity, gas, steam and air conditioning supply
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	1 436.0	1 436.1	109.2	Water supply, sewerage, waste management and remediation activities
ուսկերչական արտադրատեսակների արտադրություն	18 764.0	19 011.0	59.4	manufacture of jeweller products
մեքենաների և սարքավորանքի նորոգում և տեղակայում	426.2	422.2	112.3	repair and installation of machinery and equipment
Էլեկտրականության, գազի, ջրոլորտի և լավորակ օդի մատակարարում	81 887.9	81 887.9	111.7	Electricity, gas, steam and air conditioning supply
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	2 611.6	2 550.4	104.0	Water supply, sewerage, waste management and remediation activities

Աղյուսակ 21.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽԱՆՈՒ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ GROSS AGRICULTURAL OUTPUT																					
	Ընդամենը Total					այդ թվում՝ of which:										Տեսակարար կշիռը, % Share, %					REPUBLIC OF ARMENIA
						բուսաբուծություն plant growing					անասնաբուծություն animal husbandry										
	2017	2018	2019	2020	2021	2017	2018	2019	2020	2021	2017	2018	2019	2020	2021	2017	2018	2019	2020	2021	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	908.6	892.9	853.3	833.3	934.4	469.3	415.8	410.9	399.5	469.1	439.3	477.1	442.4	433.8	465.3	100	100	100	100	100	LORI
LՈՐԻ	79.0	73.2	68.5	67.2	78.6	29.0	21.6	21.6	20.4	25.0	50.0	51.6	46.9	46.8	53.6	8.7	8.2	8.0	8.1	8.4	LORI

Աղյուսակ 22.

ԿԱՐՏՈՖԻԼԻ ՑԱՆՔԱՍԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԻՋԻՆ ԲԵՐՔԱՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԽԱՆՈՒ ԲԵՐՔԸ SOWN AREAS UNDER POTATOES, AVERAGE YIELD CAPACITY AND GROSS HARVEST																
	Ցանքադաշտային տարածքներ, հա Sown areas (ha)					Բերքատվությունը, ց/հա Yield capacity (centner/ha)					Համախառն բերքը՝, հազ. տոննա Gross harvest՝ (ths. tons)					REPUBLIC OF ARMENIA
	2017	2018	2019	2020	2021	2017	2018	2019	2020	2021	2017	2018	2019	2020	2021	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	25 337	22 062	20 477	20 531	20 125	214.9	187.3	199.2	212.8	179.3	547.4	415.1	404.1	437.2	364.6	LORI
LՈՐԻ	4 190	3 596	3 432	3 510	3 543	175.8	145.8	158.9	168.9	151.3	73.7	52.4	49.4	59.3	53.6	LORI

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿԱԲՈՒՅՄԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԻՋԻՆ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ SOWN AREAS UNDER VEGETABLES, AVERAGE YIELD CAPACITY AND GROSS HARVEST																
	Ցանքատարածությունները (ներառյալ ջերմոց և ջերմատուն), հա Sown areas including greenhouse and hothouse (ha)					Բերքատվությունը, ց/հա Yield capacity (centner/ha)					Համախառն բերքը՝ հազ. տոննա Gross harvest' (ths. tons)					
	2017	2018	2019	2020	2021	2017	2018	2019	2020	2021	2017	2018	2019	2020	2021	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	28 280	21 658	20 616	21 272	19 506	286.3	258.6	265.0	280.8	271.8	861.0	628.2	621.6	692.8	619.6	REPUBLIC OF ARMENIA
ԼՈՐԻ	1 602	1 338	1 303	1 296	1 284	173.0	135.2	114.9	122.9	95.3	27.7	18.1	15.0	15.9	12.2	LORI

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿԱԲՈՒՅՄԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԻՋԻՆ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԲԵՐՔԸ SOWN AREAS UNDER MELONS, AVERAGE YIELD CAPACITY AND GROSS HARVEST																
	Ցանքատարածությունները, հա Sown areas (ha)					Բերքատվությունը, ց/հա Yield capacity (centner/ha)					Համախառն բերքը՝ հազ. տոննա Gross harvest' (ths. tons)					
	2017	2018	2019	2020	2021	2017	2018	2019	2020	2021	2017	2018	2019	2020	2021	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	6 812	4 602	4 257	3 995	4 525	316.8	276.3	300.6	317.1	291.6	215.8	126.8	128.0	126.6	131.8	REPUBLIC OF ARMENIA
ԼՈՐԻ	7	7	9	7	8	88.7	140.9	61.0	109.9	88.6	0.1	0.1	0.1	0.1	0.1	LORI

Խաղողի տնկարկների տարածքությունները կազմել են 67հա, միջին բերքատվությունը՝ 13.8ց/հա, խամախառն բերքը՝ 0.1հազ.տ:

Խոշոր եղջրավոր կենդանիների գլխաքանակը կազմել է 74.5հազ.գլուխ, այդ թվում կովեր՝ 36.5հազ.գլուխ, խոզեր 13.3հազ.գլուխ, ոչխարներ և այծեր՝ 31.6հազ.գլուխ, ձիեր՝ 2.7հազ.գլուխ:

Իրականացվել է 21298.3մլն.դրամի շինարարություն և 20230.8մլն.դրամի շինմոնտաժային աշխատանքներ, գործարկվել են 3891.3մլն.դրամի հիմնական գործարկումներ:

Փոխադրվել է 824հազ.տ բեռ, բեռնաշրջանառությունը կազմել է 24.4մլն.տ/կմ: Ինչպես նաև փոխադրվել է 2278.7հազ. ուղևոր, ուղևորաշրջանառությունը կազմել է 34.6մլն.ողևոր/կմ:

Ավտոմոբիլային տրանսպորտի ընդլծհանուր վազքն ըստ տևանսպորտի առանձին տեսակների կազմել է.

- ✓ բեռնատար ավտոմեքենաներ – 3093.7հազ.կմ,
- ✓ ուղևորատար ավտոմեքենաներ – 2857.2հազ.կմ,
- ✓ թեթև մարդատար ավտոմեքենաներ – 3134.1հազ.կմ,
- ✓ հատուկ ավտոմեքենաների վազք – 1028.2հազ.կմ:

Ավտոմոբիլային տրանսպորտի օգտագործված վառելիքն ըստ տեսակների  
բաշխվել է հետևյալ համամասնությամբ.

- ✓ բենզին – 281.8հազ.լ,
- ✓ դիզելային վառելանյութ – 1672.6հազ.լիտր,
- ✓ բնական սեղմված գազ – 630.1հազ.մ<sup>3</sup>:

▪ **Հողերի տնտեսական յուրացման բնութագիր**

Աշխատանքների համար ընտրված տարածքը վարչական տեսակետից  
ներառված է Փամբակ խոշորացված համայնքի Մարգահովիտ գյուղական  
բնակավայրի սահմաններում:

Փամբակ բազմաբնակավայր համայնքը ձևավորվել է 24.09.2021թ.-ին՝  
Ազնվաձոր, Ձորագետ, Արջուտ, Բագում, Դեբետ, եղեգնուտ, Լեռնապատ, Հալավար,  
Լեռնաջուր, Ձորագետ, ձորագյուղ, Մարգահովիտ, Բժվահագնաձոր, Վահագնի,  
Փամբակ և Քարաբերդ համայնքների միավորման արդյունքում:

Համայնքի կենտրոնն է Փամբակ բնակավայրը: 2022 թվականի հունվարի 1-ի  
դրությամբ համայնքի բնակչությունը կազմում է 13215 մարդ:

Համայնքի տարածքում գործում են 13 ուսումնական, 7 նախադպրոցական, 12  
բժշկական հաստատություններ, 1 մշակույթի կենտրոն, 3 մշակութային խմբակներ, 3  
գրադարան, 1 մարզադպրոց, 11 եկեղեցի, 42 խանութ, 14 գործարան, 13 հյուրանոց  
(հյուրատուն), 9 վերամշակող կազմակերպություն, 1 հանքարդյունաբերական  
կազմակերպություն, 3 ժամանցի վայր, 7 հրդեհապայթյունավտանգ օբյեկտներ:

Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքներն են կատրոֆիլը,  
ցորենը, գարին, միսը, կաթը, բանջարաբոստանային կուլտուրաները, պտուղները,  
մեղրը:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը  
բնակավայրի կադաստրային քարտեզում հաշվառված է 06-070-0318-0009  
ծածկագրով, որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության  
հողատարածք, գործառնական նշանակությունը՝ խոտհար (հավելված 1-ում  
ներկայացված են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման  
վկայականները):

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների վերաբերյալ տվյալները և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը ներկայացվել են համայնքի բնակիչներին, քննարկվել է ծրագրավորվող աշխատանքներում բնակիչների ներգրավման, ինչպես նաև համայնքին սոցիալական աջակցության ծրագրերի իրականացման հարցը:

▪ **Պատմության, մշակութային հուշարձաններ**

ՀՀ կառավարության 2004 թվականի հունվարի 29-ի N49-Ն որոշմամբ հաստատվել է Լոռու մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, իսկ 2007 թվականի N385-Ն որոշմամբ՝ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակները:

Մարգահովիտ բնակավայրի տարածքում հաշվառված են հետևյալ պատմության և մշակութային հուշարձանները.


Աղյուսակ 25.

Հուշարձանի, խմբի համարը, ենթահամարը			Անվանումը	Ժամանակաշրջանը	Գտվելու վայրը
1			ԲՆԱԿԱՏԵՂԻ	Ք. ա. 4-3 հազ.	գյուղի հս եզրին, ճանապարհի ձախ կողմում
2			ԲՆԱԿԱՏԵՂԻ «ՍԱՐԻ ՍՈՓ»	Ք. ա. 3-1 հազ.	գյուղի ամ եզրին
3			ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	19-20-րդ դդ.	Եկեղեցուց 70 մ ամ
4			ԵԿԵՂԵՑԻ ՍԲ. ԿԱՐԱՊԵՏ	1872 թ.	գյուղի հվ մասում, բլրակի վրա
	4.1		Գերեզմանոց	17-20-րդ դդ.	Եկեղեցու շրջակայքում
		4.1.1	Եկեղեցի	վաղ միջնադար	գերեզմանոցի հվ մասում
		4.1.2	Խաչքար	17-18-րդ դդ.	
		4.1.3	Տապանաքար	16-17-րդ դդ.	գերեզմանոցի հվ եզրին, ճանապարհի մոտ
		4.1.4	Տապանաքար	18-19-րդ դդ.	
	4.2		Զանգակատուն	19 դ.	Եկեղեցուն կից
	4.3		Խաչքար	15-16-րդ դդ.	Եկեղեցու մուտքի աջ անկյունում



Հուշարձանի, խմբի համարը, ենթահամարը		Անվանումը	Ժամանակաշրջանը	Գտվելու վայրը
4.4		Խաչքար	15-16-րդ դդ.	Եկեղեցու առ պատի վրա
5		ԽԱՉՔԱՐ	17 դ.	գյուղի առ եզրին, «Սարի սուփ» կոչվող բլրի վրա
6		ՀՈՒՇԱԿՈԹՈՂ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՂՎԱԾՆԵՐԻՆ	1970-ական թթ.	գյուղի առ եզրին, Վանաձոր - Դիլիջան մայրուղուց ձախ
7		ՀՈՒՇԱՂԲՅՈՒՐ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՂՎԱԾՆԵՐԻՆ		գյուղի խնայրամարկղի մոտ
8		ՀՈՒՇԱՐՁԱՆ ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆԻՆ		հիվանդանոցի մոտ

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ հաշվառված չեն: Մոտակա հուշարձանը (ըստ բնակավայրի կադաստրային քարտեզի) գտնվում է հայցվող տեղամասից 1.46կմ հեռավորության վրա (նկար 26):



Նկար 26.



**4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ  
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

***Ազդեցությունը մթնոլորտային օդի վրա***

Մթնոլորտային օդի վրա նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության ազդեցության գնահատումը կատարվել է հաշվի առնելով աշխատանքների տեխնիկական բնութագրերը, տեղանքի ռելիեֆը, աշխատանքների շրջանի ֆիզիկա-աշխարհագրական և կլիմայական պայմանները:

Համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N1673-Ն որոշման՝ տեղանքում մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվությունն ստացվում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կայքից: Եթե տվյալ բնակելի տարածքի համար համապատասխան տեղեկատվությունը ֆոնային աղտոտվածության վերաբերյալ բացակայում է, ապա 250000 մարդուց պակաս բնակելի տարածքների համար ֆոնային աղտոտվածության խտություններն ամենատարածված աղտոտող նյութերի համար ընդունվում են՝ ծծմբի երկօքսիդի համար՝ 0.1մգ/մ<sup>3</sup>, ազոտի օքսիդների համար՝ 0.03մգ/մ<sup>3</sup>, ածխածնի օքսիդի համար՝ 1.5մգ/մ<sup>3</sup>, չտարբերակված անօրգանական փոշու համար՝ 0.2մգ/մ<sup>3</sup>:

Հայցվող տարածքում մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրներն են հետախուզական փորվածքների անցման աշխատանքները և ավտոտրանսպորտի տեղաշարժը:

Արտանետման տեսակներն են՝

- ✓ փոշի – հետախուզահորերի անցման հետ կապված,
- ✓ վնասակար գազեր - առաջանում են շարժիչներում վառելանյութի այրումից, սարքավորումների տեխսպասարկման ու վերանորոգման աշխատանքներից:

Հայցվող տարածքում կանխատեսվում է 0.07գ/վրկ փոշու արտանետում, որը կրում կարճատև բնույթ:

***Ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա***

Հայցվող տեղամասի տարածքում մակերևութային ջրային հոսքեր չկան, Աղստև գետի հունը գտնվում է 330-345մ հեռավորության վրա: Հետևաբար,

տեղամասում հետախուզական հորերի անցումը որևէ ազդեցություն մակերևութային ջրային ռեսուրսների վրա չի ունենալու:

Ստորգետնյա ջրային ռեսուրսների վրա ազդեցությունները բացառելու նպատակով տեղամասում նախատեսվում է անջրաթափանց բետոնապատ հորի կառուցում, որտեղ կկուտակվեն կենցաղային արտահոսքերը: Հետևաբար, ստորգետնյա ջրերի վրա ազդեցություն ծրագրավորվող աշխատանքների արդյունքում չի դրսևորվելու:

Տարածքի տեխնիկական ջրամատակարարման համար նախատեսվում է ջուրը վերցնել Աղստև գետից, այդ նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից ստանալ ջրօգտագործման թույլտվություն:

Խմելու և կենցաղային նպատակներով անհրաժեշտ ջուրը նախատեսվում է գնել մոտակա բնակավայրերի առևտրի կետերից շշայցված տարբերակով և աշխատանքները սպասարկող մեքենայով տեղափոխել երևակյան տարածք:

#### ***Ազդեցությունը հողային ռեսուրսների վրա***

Հողային ռեսուրսների վրա ազդեցությունը լինելու է խիստ սահմանափակ՝ ընդամենը 25.5մ<sup>2</sup> տարածքի վրա (17 հոր յուրաքանչյուրը 1.5մ<sup>2</sup> կտրվածքով): Տեղամասի տարածքի ճմակալած, տորֆացված հողային զանգվածը գրեթե ձուլված է, խիտ ներարկված է մեծ քանակությամբ վերերկրյա և արտամային բուսական զանգվածով, որը և կազմում է տորֆային կուտակի մակերևութային քոլքային/խճուճային շերտը (օբեց):

Հետախուզահորերի անցման ժամանակ նախապես հեռացվում է 0.5մ հզորությամբ քոլքային/խճուճային շերտը, որը կարճաժամկետ կտրվածքով տեղադրվում է հորի անմիջական մոտակայքում՝ տորֆային զանգվածից և կավային ապարներից տարանջատված: Նմուշարկման և փաստագրման աշխատանքներից հետո կատարվելու է տարածքի ռեկուլտիվացիա:

Հնարավոր է նաև հայցվող տարածքի աղտոտում նավթամթերքներով, ինչը կապված է ավտոտրանսպորտի տեղաշարժի հետ:

Ճանապարհների շինարարության համար հողերի օտարում չի պահանջվում, քանի որ աշխատանքների ընթացքում օգտագործվելու են բարվոք վիճակում գտնվող գոյություն ունեցող բնահողային ճանապարհները:

***Ազդեցություն կենսաբազմազանության վրա***

Հայցվող տարածքի սահմաններում դիտարկվել է ՀՀ տարածքի ջրաճահճային լանդշաֆտներում լայն տարածքում ունեցող բուսականություն: Աշխատանքների ընթացքում կարճաժամկետ կտրվածքով 0.5մ հզորությամբ քոլքային/խծուծային շերտը խախտվելու է հետախուզահորերի 25.5մ<sup>2</sup> տարածքում:

Կենդանիների համար կատարվելիք հետախուզական աշխատանքները, դրանց հետ կապված աղմուկն ու թրթռումները հանդիսանալու են անհանգստացնող գործոն: Կանխատեսվում է կենդանիների կարճատև միգրացիա երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքից՝ բնական ապրելավայրերի/լանդշաֆտների փոփոխության պատճառով:

Հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն դիտարկվել:

Մարգահովիտի հանքավայրի 1-ին տեղամասի տարածքը չի հանդիսանում բնության հատուկ պահպանվող տարածք, բնության հուշարձաններ երևակման տարածքում հաշվառված չեն:

Հետևաբար, պահպանվող էկահամակարգերի վրա որևցե ազդեցության աշխատանքների արդյունքում չի դրսևորվելու:

***Աղմուկ և թրթռումներ***

Ծրագրավորվող հետախուզական փորվածքների անցման անբարենպաստ ներգործություն ունեցող գործոններից մեկը առաջացող աղմուկն է: Հատկապես կարևորվում է աղմուկի մակարդակի ուսումնասիրությունն ու գնահատումը ազդակիր Մարգահովիտ գյուղական բնակավայրի տարածքում:

Ըստ գործող նորմատիվ պահանջների, աղմուկի թույլատրելի մակարդակը արտադրական հրապարակում ընդունված է 80 դԲԱ, բնակելի գոտում՝ 45 դԲԱ:

Աղմուկի ազդեցությունը ազդակիր Մարգահովիտ բնակավայրում գնահատելու նպատակով կատարվել են հետևյալ հաշվարկները:

Հայցվող տեղամասում գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը՝ LAէկվ ընդունված է 55դԲԱ:

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

$$LA_{տար} = La_{էկվ} - \Delta La_{հեռ} - \Delta La_{էկր} - \Delta LA_{կանաչ բանաձևով, որտեղ՝$$

LAէկվ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, LAէկվ=55դԲԱ,

ΔLAհեռ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված, ΔLAհեռ կազմում է 15դԲԱ,

ΔLAէկր - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով (բացահանքի տարածք), ΔLAէկր =10դԲԱ,

ΔLAկանաչ- աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով, ΔLAկանաչ=10դԲԱ:

Աղմուկի մակարդակը Մարգահովիտ գյուղի մոտ կկազմի՝

$$L_{\text{աղմուկ}} = L_{\text{էկվ}} - \Delta L_{\text{ահեռ}} - \Delta L_{\text{աէկր}} - \Delta L_{\text{ա կանաչ}} = 55 - 15 - 10 - 10 = 20 \text{դԲԱ}$$

(նորման 45դԲԱ):

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու է առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Թոթրումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:

### ***Ընդերքօգտագործման թափոններ***

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ ընդերքօգտագործման թափոններ չեն առաջանալու: Հետախուզահորերից հանված զանգվածը (քուլբային/խծուծային շերտ, տորֆ, կավային առաջացումներ) նմուշարկումից հետո հետ է լցվելու հորերի տարածք, կատարվելու է ռեկուլտիվացիա նախապես հեռացված 0.5մ հզորությամբ տորֆացված-բուսականության հետ խառնված վերին շերտով:

Վառելիքի լիցքավորումը, օգտագործված քսայուղերի և անհրաժեշտ հատկությունները կորցրած յուղերի փոխարինումը կատարվելու է մոտակա Մարգահովիտ, Լերմոնտովո կամ Ֆիոլետովո բնակավայրերում կամ Մ-8 միջպետական ավտոճանապարհի հարակից հատվածներում գործող՝ համապատասխան մասնագիտացված ծառայություններ մատուցող կազմակերպություններում: Հետևաբար, բուն տեղամասի տարածքում նավթամթերքներով, դրանց մնացորդներով ներկայացված թափոններ չեն առաջանալու:

Առաջանալու է կենցաղային աղբ: Այս տեսակին են պատկանում թուղթը, տեքստիլը, պլաստմասսան, սննդամթերքի մնացորդը և այլն, օրական 10կգ առավելագույն քանակությամբ: Այս թափոնները կտեղափոխվեն համայնքի մոտակա աղբահավաք կետեր, որտեղից պարբերաբար կոմունալ ծառայության կողմից տեղափոխվում են շրջանի աղբավայրերը: Տեղական ինքնակառավարման մարմինների հետ նախատեսվում է կնքել աղբահանության պայմանագիր, կատարել համապատասխան վճարումներ: Կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 91200400 01 00 4:

### ***Պատմամշակութային միջավայր***

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ հաշվառված չեն: Մոտակա հուշարձանը (ըստ բնակավայրի կադաստրային քարտեզի) գտնվում է հայցվող տեղամասից 1.46կմ հեռավորության վրա: Հայցվող տարածքները բնակավայրի կադաստրային քարտեզում հաշվառված են որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության հողատարածքներ:

Հետևաբար, պատմամշակութային հուշարձանների վրա որևիցե ազդեցություն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների հետևանքով չի դրսևորվելու:

### ***Անտառային ռեսուրսներ***

Գուգարքի անտառնտեսության անտառային տարածքները հայցվող տեղամասից գտնվում են 385մ-ից մինչև մոտ 3կմ հեռավորության վրա (ըստ կադաստրային քարտեզների տվյալների): Հետևաբար, որևէ ազդեցություն անտառային ռեսուրսների վրա 25.5մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով հետախուզահորերի անցման ժամանակ չի կարող դրսևորվել:

### ***Մոցիալ-տնտեսական ազդեցություն***

Ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները իրականացվելու են Փամբակ խոշորացված համայնքի Մարգահովիտ գյուղական բնակավայրի վարչական տարածքում:

Հայցվող տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացումը որոշակի ազդեցություն կունենա նաև ազդակիր համայնքի մարդկանց կյանքի և պայմանների վրա:



Աշխատանքների թափանցիկությունն ու համայնքների իրազեկվածությունն ապահովելու նպատակով՝ «Համազյհման Էկո» ՄՊԸ-ի կողմից «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, իրականացվելու են հանրային լսումներ և քննարկում, որոնց ընթացքում դիտարկվելու են համայնքներին աջակցության հնարավոր միջոցառումները:

Համայնքների նպատակային աջակցության միջոցառումներ մշակելու նպատակով աշխատանքն իրականացվելու է համայնքապետարանի հետ՝ պարզելու համար առաջնային լուծում պահանջող սոցիալական խնդիրները: Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում համայնքապետարանի հետ համաձայնեցված իրականացվելու են սոցիալական աջակցության ծրագրեր: Կատարվելու է ելակետային պայմանների հավաքագրում:

Սոցիալ-տնտեսական աջակցության ծրագրերը պիտի միտված մի շարք խնդիրների լուծմանը, մասնավորապես.

- նոր աշխատատեղերի ստեղծում: Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում բազմաթիվ օժանդակ աշխատանքների (օրինակ՝ վարորդներ, տեխնիկական ջրի մատակարարում, աշխատակիցներին սննդի մատակարարում և այլն) իրականացման համար հատուկ մասնագիտական կրթություն չի պահանջվում: Հետևաբար, այդ աշխատանքներին ներգրավվելու են ազդակիր համայնքների բնակիչները, ինչը կստեղծի բնակիչների զբաղվածություն և լրացուցիչ եկամուտ ընտանիքների համար: Միաժամանակ, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնող անձնակազմի սննդի ապահովման նպատակով գնումներ են կատարվելու հենց համայնքներում, ինչը նույնպես դրական ազդեցություն է ունենալու ապրանքաշրջանառության ծավալի, տեղական արտադրանքի սպառման շուկայի վրա:

- համայնքների տնտեսական ուղղվածության շրջանակներում՝ նոր, մշակում և ներդրում: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ նախատեսվում է կատարել կենսաբազմազանության, այդ թվում բուսական ծածկույթի դիտարկում, ուսումնասիրություն՝ համապատասխան որակավորում ունեցող մասնագետների մասնակցությամբ: Առանձնահատուկ

ուշադրություն է նախատեսվում դարձնել դեղաբույսերի տեսակի և տարածման արեալների վրա:

Միաժամանակ, ընկերությունը նախատեսում է երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցությունների ամբողջական մոնիթորինգ՝ համայնքների բնակիչների, դրանց կենսապայմանների վրա ցանկացած բացասական ազդեցությունների վերահսկման և կանխարգելման նպատակով:

Աշխատանքների ժամանակ ժամանակավորապես օգտագործումից դուրս եկած հողերի ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 25.5մ<sup>2</sup> կամ 0.00255հա: Հողօգտագործման համար վնասի փոխհատուցման գումարը համայնքին կկազմի  $0.00255\text{հա} \times 3600000 = 9180\text{դրամ}$ :

#### ***Սանիտարական պահպանության գոտի***

ՄՆ 245-71 սանիտարական նորմերով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար սանիտարական պահպանության գոտի նախատեսված չէ: Առանց պայթեցման աշխատանքների կիրառման շինանյութերի արդյունահանման և վերամշակման արտադրության ձեռնարկությունների համար սահմանված է 50մ սանիտարական պահպանման գոտի:

Մարգահովիտ գյուղի բնակելի հատվածից հայցվող տարաշքը գտնվում է նավագագույնը 2.17կմ հեռավորության վրա, ինչը գերազանցում է սանիտարական պահպանության գոտու չափը ավել քան 43 անգամ:

Որպես խոտհարկ օգտագործվող տեղամասի սահմաններում սանիտարապաշտպանիչ գոտի պահանջող (օրինակ՝ խմելու ջրի մատակարարման կառույցներ և այլն) կառույցներ չկան:

**5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ  
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ նախատեսում են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք թույլ կտան նվազեցնել ազդեցությունը շրջակա միջավայրի վրա աշխատանքների ընթացքում:

***Մթնոլորտային օդի պահպանության միջոցառումներ.***

- Աշխատանքները սպասարկող տեխնիկական միջոցները՝ մեքենաները պետք է կահավորված լինեն արդիական փոշեռսիչներով, ինչը զգալիորեն նվազեցնում է հանքափոշու արտանետումները մթնոլորտ;
- կիրառվող ավտոտրանսպորտի շարժիչների վառոցքները պետք է լինեն կարգավորված, ինչը կնվազեցնի մթնոլորտ արտանետվող գազերի քանակը;
- մեքենաների շարժիչների գազերի արտանետման վրա տեղադրված են կատալիտիկ չեզոքացուցիչներ, ինչը թույլ է տալիս կրճատել գազերի արտանետումները մթնոլորտ;
- տաք և չոր եղանակին հետախուզահորերի անցման վայրերի և մոտեցնող ճանապարհի ջրցանում (առավոտյան և երեկոյան), ինչը թույլ է տալիս կրճատել փոշու արտանետումները,
- մթնոլորտային օդում փոշու և աղոտոտղ նյութերի պարբերական մոնիթորինգի իրականացում, ստացված տվյալների վերլուծություն, ըստ անհրաժեշտության բնապահպանական միջոցառումների վերանայում:

***Ջրային ռեսուրսների պահպանության միջոցառումներ.***

- Կենցաղային կեղտաջրերի հավակում անջրաթափանց հորի մեջ, աշխատանքների ավարտից հետո հորի դատարկում հատուկ ծառայության ուժերով և հորի լցում քարերով;
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ջրօգտագործման թույլտվության ստացում՝ տեխնիկական ջրամատակարարումը կատարելու համար:

***Հողային ռեսուրսների պահպանության միջոցառումներ.***

Հետախուզահորերի անցման ժամանակ առաջանում է տորֆային զանգված, կավային ապարներ և վերին՝ քուլային/խճուճային շերտ: Նմուշարկման և

փաստագրման աշխատանքներից հետո կատարվելու են 25.5մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով խախտված հողերի ռեկուլտիվացիոն աշխատանքներ, վերականգնվելու է տարածքի բնական լանդշաֆտը : Հետախուզահորերի անցման ժամանակ առաջացած կավային առաջացումներ և տորֆային կուտակը հետ է լցվելու հորերի տարածք, այնուհետև հարթեցված մակերևույթի վրա փովելու է մոտ 0.5մ հզորությամբ վերին քուլքային, քիչ քայքայված շերտը:

Ռեկուլտիվացիայի ենթակա ընդհանուր մակերեսը կազմում է 17 x 1.5մ<sup>2</sup> = 25.5մ<sup>2</sup>:

Հետլցված, հարթեցման, փխրեցման և քուլքային շերտով ծածկման աշխատանքների գումարը կկազմի 55.5հազ. դրամ: Կենսաբանական ռեկուլտիվացիայի փուլում նախատեսվում կատարել շրջանի ջրաճահճային միջավայրերին բնորոշ Trifolium տեսակի ստրատիֆիկացված սերմերի ցանկ :

Աղյուսակ 26.

N	Ծախսերի հոդվածները	Չափման միավորը	Գումարը, հազ.դրամ
1.	Հետլցման աշխատանքների արժեք (վառելիք, աշխատավարձ)	հազ.դրամ	30.0
2.	Վերին քուլքային շերտի փոման աշխատանքների արժեք (25.5մ <sup>2</sup> ×1000 դրամ)	հազ.դրամ	25.5
3.	Ռեկուլտիվացիայի կենսաբանական փուլի նյութեր, սերմեր, տրանսպորտային ծախսեր	հազ.դրամ	40.0
4.	Բուսաբան-մասնագետի աշխատավարձ (3 աշխատանքային օր, օրեկան 10.0հազ.դրամ)	հազ.դրամ	30.0
	Ընդամենը	հազ.դրամ	125.5
5.	Անուղղակի ծախսեր	հազ.դրամ	6.7
6.	Չնախատեսված ծախսեր	հազ.դրամ	13.22
	<b>Ընդհանուրը</b>	<b>հազ.դրամ</b>	<b>145.42</b>

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում կատարվելու է նաև հայցվող տարածքի հողային ծածկույթի մոնիթորինգ:

***Կենսաբազմազանության պահպանության միջոցառումներ.***

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներին ներգրավված անձնակազմի ուսուցում՝ իրազեկում շրջանում հայտնի ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ;
- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության

միջոցառումների իրականացում: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացնելիս ընկերության կողմից գործունեության հայտում և հետագայում՝ գնահատման հաշվետվության մեջ ներառվում և հետագայում իրականացվում են վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրություն (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ), որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնին):

Հողերում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով ընկերությունը պարտավորվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- 1) առանձնացնել օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.
- 2) Ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.
- 3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխել բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրել համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:



- աղմուկի մակարդակի վերահսկողություն՝ կենդանիների համար անհագստացնող գործոնների նվազեցման համար;
- խախտված տարածքների ռեկուլտիվացիա;
- նախքան հետախուզահորերի անցումը կկատարվի տարածքի կրկնակի զննում՝ թռչունների բները հայտնաբերելու և տեղափոխելու նպատակով;
- նախքան հետախուզահորերի անցումը կկատարվի տարածքի կրկնակի զննում՝ սողունների հայտնաբերման և տարածքից տեղափոխման նպատակով;
- երկրաբանական և հիդրոերկրաբանական երթուղիների ժամանակ մասնագետների կողմից կատարվելու են հարվածներ ձեռնափայտով, ինչի արդյունքում ձևավորվող ալիքները սողունների համար դառնալու են անհանգստացնող գործոն և ստիպելու են հեռաբալ տարածքից, դա իր հերթին թույլ կտա բացառել մարդ-սողուն ընդհարումը;
- բուսածածկի և կենդանական աշխարհի պարբերական մոնիթորինգ:

***Ընդերքօգտագործման և արտադրական թափոններով աղտոտման կանխարգելում.***

- Հետախուզահորերից հանված նյութի հետլցնում, տարածքի ռեկուլտիվացում;
- չտեսակավորված կենցաղային աղբը տեղափոխվում է աղբավայր փակ կողեր ունեցող ինքնաթափով, սպասարկման պայմանագրի կնքում ծառայություն մատուցող կազմակերպության հետ, վճարների իրականացում:

***Աղմուկի և տատանումների կառավարում.***

- աղմուկի աղբյուր հանդիսացող մեքենաների շարժիչների կահավորում հատուկ ձայնամեկուսիչ պատյաններով;
- բաց դիմաձածկոցներով սարքավորումների և մեխանիզմների շահագործման բացառում:

***Պատմամշակութային հուշարձանների պաշտպանություն.***

- պատահական գտածոների ընթացակարգի կիրառում՝ հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով.

✓ համապատասխան անձնակազմի և պայմանագրով աշխատողների ուսուցում պատահական հնագիտական գտածոների ճանաչման, դրանց հետ վարվելակերպի և արձագանքի ուղղությամբ;

✓ գտածոների ուսումնասիրություն հրավիրված հնագետների կողմից, որպեսզի վերջիններս ուղղորդեն հնագիտական գտածոների ճանաչման և արձագանքման գործընթացը,

✓ արձանագրությունների կազմում պատահական գտածոներին արձագանքելու համար, ներառյալ աշխատանքի ժամանակավոր դադարեցումը գտածոների հայտնաբերման վայրում;

✓ պետական մարմինների ծանուցում,

✓ պատահական գտածոների գնահատման և պեղումների արագացված ընթացակարգերի կիրառում, ազդեցությունների սահմանափակման համար, միաժամանակ նվազեցնելով ծրագրավորված աշխատանքների ուշացումները:

Ծրագրավորված բնապահպանական միջոցառումները ներկայացվում են նաև աղյուսակի տեսքով.

Աղյուսակ 27.

Գործողությունը	Հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բնական բաղադրիչի վրա	Չեզոքացման միջոցառումը	Արժեքը
1	2	3	4
Հետախուզական փորվածքների անցում, տրանսպորտի տեղաշարժ	Փոշու և ծխազագերի արտանետումներ, մթնոլորտային օդի որակի փոփոխություն	Ջրցան	Տարեկան 50.0հազ.դրամ
		Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում	Ընկերության մեքենաները կահավորված են համապատասխան սարքերով, լրացուցիչ ծախս չի նախատեսվում
		Մթնոլորտային օդի որակի պարբերական մոնիթորինգ	Տարեկան 120.0հազ.դրամ
	Խախտված տարածքների վերականգնում	145.42հազ.դրամ*	
	Հողերի խախտում հետախուզական հորերի սահմաններում	Վերին տորֆային-բուսական շերտի նախնական հեռացում և պահպանում: Խախտված տարածքների վերականգնում (լեռնատեխնիկական և կենսաբանական փուլերով)	145.42հազ.դրամ*

	Տեղամասի տարածքի հողերի աղտոտում նավթամթերքներով	Տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը, յուղերի փոխարինումը, մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարվելու է մոտակա բնակավայրերում	«Համգաչիման Էկո» ՍՊ ընկերությունը այս հողվածով ծախսեր չի իրականացնելու
		Հողերի աղտոտվածության պարբերական մոնիթորինգ	Տարեկան 90.0հազ.դրամ
Հետախուզական փորվածքների անցում, տրանսպորտի տեղաշարժ	Տեղամասի տարածքի հողերի աղտոտում նավթամթերքներով	Տրանսպորտի տեղաշարժ բացառապես գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհներով	Ծախսեր չի պահանջում
	Բուսածածկի խախտում հետախուզական հորեր սահմաններում	Խախտված տարածքների վերականգնում (լեռնատեխնիկական և կենսաբանական փուլերով)	145.42հազ.դրամ*
		Կենսաբազմազանության մշտադիտարկում, տարեկան մեկ անգամ պարբերականությամբ	Տարեկան 280.0հազ.դրամ
		ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջների ապահովում	Տարեկան 100.0հազ.դրամ
	Կենդանիների միգրացիա լանդշաֆտի խախտման և առաջացող աղմուկի հետևանքով	Խախտված տարածքների վերականգնում (լեռնատեխնիկական և կենսաբանական փուլերով)	145.42հազ.դրամ*
		Աղմուկի մակարդակի չափումներ	Տարեկան 80.0հազ.դրամ

1	2	3	4
Անձնակազմի կենսագործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծում	Տեղամասի տարածքի աղբոսում կենցաղային թափոններով	Կենցաղային աղբի հավաքում հատուկ պարկերի մեջ և հետագա տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր	Տարեկան 150.0հազ.դրամ
	Տեղամասի տարածքի աղտոտում կենցաղային արտահոսքերով	Հորատի պ բետոնապատ անջրաթափանց զուգարանի շինարարություն	Կատարվելու է նախքան հետախուզական աշխատանքների մեկնարկը, 25.0հազ.դրամ
		Հորատի պ զուգարանի դատարկում հատուկ ծառայության ուժերով	Տարեկան 80.0հազ.դրամ

\* նույն գումարն է, որը վճարվում է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշման դրույթներին համապատասխան

## 6. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Արտակարգ իրավիճակների պատրաստ լինելու համար երևակման տարածքում նախատեսվում են շարժական կապի միջոցներ, առաջին բուժօգնության միջոցներ, անվտանգության կանոնների վերաբերյալ անձնակազմի գիտելիքների ստուգում:

Երևակման շրջանում արտաձին երկրաբանական պրոցեսներ արտահայտված չեն, ինչը պայմանավորված է տարածքի երկրաձևաբանական առանձնահատկություններով: Մոտակա հայտնի սողանքային մարմինը քարտեզագրվել է երևակման տարածքից մոտ 1.8կմ հեռավորության վրա:

Երևակման տարածքում արտակարգ իրավիճակները կարող են պայմանավորված լինեն հետևյալ գործոններով.

1) Երկրաշարժ՝ հաշվի առնելով, որ Հանրապետության տարածքը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում: Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի «Սեյսմակայուն շինարարություն. նախագծման նորմեր» N 24-Ն հրամանի՝ երևակման տարածքը գտնվում է 3-րդ սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 500սմ/վրկ<sup>2</sup> կամ 0.5g գրունտի հորիզոնական արագացման մեծություն:

Նախատեսվում է մշակել ուժեղ երկրաշարժերի դեպքում գործողությունների պլան՝ վտանգավոր տարածքներից աշխատակիցների ապահով տարահանումն իրականացնելու նպատակով: Անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում իրականացնելու ժամանակ առանձին ներկայացվելու են նաև երկրաշարժերի ժամանակ աշխատակիցների պահվածքի կանոնները, գործողությունների հաջորդականությունը: Աշխատանքները սպասարկող կենցաղային նշանակության վազոն-տնակում նախատեսվում են առաջին օգնության դեղորայքային փաթեթներ:

2) Հրդեհներ՝ կապված մարդածին գործոնների հետ: Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ: Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան: Երևակման տարածքում՝ հատուկ հատկացված վայրում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով արկղ, բահ:



3) Անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագացում, անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ, թանձր մառախուղ, ամպրոպ) : Անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների իհայտ գալու դեպքում կիրառվում են հետևյալ միջոցառումները (ըստ իրավիճակի).

- ավելացվում է կատարվելիք ջրցանը,
- կրճատվում է աշխատանքի տևողությունը,
- կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը,
- նվազեցվում է փոշեգոյացման հետ կապված աշխատանքների ծավալները,
- բեռնատար մեքենաները կահավորվում են հատուկ մառախուղի լույսերով,
- աշխատակիցները պատսպարվում են արտադրական հրապարակում տեղադրված վազոն-տնակում:

Տեղամասի տարածքում աշխատանքների անվտանգ իրականացման նպատակով.

- աշխատանքի են թույլատրվում անձիք, որոնք ունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում,
- օգտագործել մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին,
- անցկացնել պլանային-զգուշացնող համալիր վերանորոգումներ, պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլ դիտարկումներ,
- աշխատանքի ժամանակ պետք է պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

Նախատեսվում է կատարել պլանային աշխատանքներ ուղղված արտադրական տրավմատիզմի նվազեցմանը, ժամանակին, ոչ ուշ քան երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:

## 7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ) ՊԼԱՆ


Մարզահովիտի տորֆի հանքավայրի 1-ին տեղամասի տարածքում իրականացվում է շրջակա միջավայրի աղտոտվածության մոնիթորինգ՝ ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N191-Ն որոշման պահանջներին համապատասխան: Ստորև, աղյուսակ 28-ում ներկայացված են ազդեցության վերահսկման նպատակով կատարվելիք բնապահպանական մոնիթորինգի հիմնական ցուցանիշները:

Աղյուսակ 28.

Մոնիթորինգի ենթակա պարամետրերը	Մոնիթորինգի վայրը	Ազդեցության դրսևորման հիմնական աղբյուրները	Մոնիթորինգի տեսակը, պարբերականությունը
1	2	3	4
Անօրգանական փոշի, ծխազագեր	Տեղամասի տարածք	Հետախուզահորերի անցում, հետ լցում	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Հողային ռեսուրսներ	Տեղամասի տարածք	Աղտոտում նավթամթերքներով	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, ամսեկան մեկ անգամ
Աղմուկ և թրթռումներ	Մարզահովիտ գյուղ	Տեխնիկայի տեղաշարժ, հորերի անցման աշխատանքներ	Չափիչ սարքերի կիրառում, տարեկան մեկ անգամ
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ	Տեղամասի տարածք և հարակից շրջան	Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների և արդյունքում տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	Հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում տարեկան մեկ անգամ

Նկար 27-ում ներկայացված են երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում շրջակա միջավայրի վրա դրսևորվող ազդեցությունների մոնիթորինգի դիտակետերի տեղադիրքը:

Մշտադիտարկումների իրականացման համար տարեկան կտրվածքով կմասնահանվի 540.0հազ.դրամ:



Նկար 27.

## Գրականություն

1. Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայք
2. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
3. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
4. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
5. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
6. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
7. “Флора и растительность рек и озер Армении и их народнохозяйственное значение”. А.М. Барсегян
8. “Растительность Армянской ССР”. Магакьян А.К.
9. “Флора, растительность и растительные ресурсы Армении”, Институт ботаники НАН РА Армянское ботаническое общество. Ереван
10. “Дикорастущие съедобные растения Армении”. А.П. Тер-Восканян, Ученые записки Ереванского государственного института.
11. “Цветущие уголки биоразнообразия”, FAO,  
<http://www.fao.org/3/i1687r/i1687r08.pdf>
12. ՀՀ Լոռու մարզպետարանի պաշտոնական կայք
13. Փամբակ խոշորացված համայնքի պաշտոնական կայք
14. ՀՀ վիճակագրական վարչության հրապարակումներ  
(<https://www.armstat.am/am/> )





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ**

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի  
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 6 ապրիլի 2022 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

**1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)**

ՀՀ ԼՈՌԻԻ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

**2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

Մարզ Լոռի, համայնք Փամբակ գյուղ Մարգահովիտ հողամաս

**3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏԱԹՂԹԵՐԸ**

Համայնքի կողմից 01/04/2022 թ-ին տրված ՌԵ-373/22 գրություն տրված ՀՀ կառավարության 29/04/2021 թ-ի թիվ 698-Ն որոշման համաձայն

**4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**

Կադաստրային ծածկագիրը՝ 06-070-0318-0009

Մակերեսի չափը (հա)՝ 1.986548

Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Խոտհարք

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ N 06042022-06-0040, գաղտնաբառ՝ QGBDS6X1WN3K**

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի  
[www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով



## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

### Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Ֆերդինանտ Կարայան

Զբաղեցրած պաշտոնը՝ Լոռու մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 06042022-06-0040, գաղտնաբառ՝ QGBDS6X1WN3K

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի [www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով

Էջ 2/2

